Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

24711

Дмитриев
Дрфирите

Ду

ну

Ду

1°18 Ври 1871,о.

891.99-197
S-37

391.99-192
Տ-37
Պեսիկեան
10 NOV 2011

ԷՔԱԿԱՏԱՐ

ԵՐԳԱՐԱՆ,

Հաւաքածու ազգային եւ ժողովրդական երգերի եւ եկեղեցական տաղերի:

Ժողովեց՝ Գէորգ Դ. Տէր Աղէքսանդրեանց:
Լոյս ընծայեց՝ Սողոմոն Յ. Վարդանեանց:

ԹԻՖԼԻՍ:
Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ և ԸՆԿ. ՏՊԱՐԱՆ:
1871:

Պեսիկեան

11.10.2013

Дозволено цензурою. Тифлисъ. 22 Ноября 1870 г.

ՍՍՀՄ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՊ-Арм.ССР
Հ. Մ. Մելքումյան
Հ. ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ

41912.63

ՅԱՌԱՋԱԲԱՆ։

Մեր դիտաւորութիւնն է հաւաքել որքան կարելի է լիակատարապէս մեր կենդանի, այսինքն այժմ երգուող և ժողովրդի սիրած ազգային և ժողովրդական երգերը և խաղերը և նմանապէս եկեղեցական տաղերը և տալ ժողովրդին կարելի ածան գնով։ Այս մասին աշխատեցինք այս վերջին տարիները և ահա՛ մեր պտուղը ձեր առաջն է դրած, ուշիմ ընթերցողներ։

Թէպէտ այս երգարանը անուանեցինք մենք լիակատար, բայց մենք ինքներս խոստովանում ենք, որ սա չը կարողացաւ լինել այնչափ լիակատար, որչափ մեր ցանկութիւնն էր։ Սրա լիակատար լինելուն արգելեցին զանազան հանգամանքներ և այդ հանգամանքներից մէկն էլ այն դժուարութիւնն էր, որ զգում է աշխատողը մանաւանդ ժողովրդական չտպուած երգերի ժողովելիս։ Մէկ մարդու համար և մէկ որ և լոյէ քաղաքում մինչև անգամ անկարելի է ժողովել ամեն հայաբնակ տեղերում երգուող բոլոր երգերը։

Թէպէտ այս այսպէս է, բայց մենք չենք դադարելու երգարանը լիակատարացնելու և այս դիտաւորութենով հենց հիմիկուանից ձեռք ենք տալիս օրա մէջ չը տպուած մեր կենդանի ազգային և ժողովրդական երգերի և եկեղեցական տաղերի հաւաքելուն և ձեռք բերելուն և այդպիսով ժամանակով այս երգարանը նորից տպելու ենք աւելի հարստացրած։ Բայց գործը աւելի լիակատար անելու համար մենք հրաւիրում ենք բոլոր հայաբնակ տեղերի այս գործին համակրող հայերին հայտնել մեզ իւրեանց աշխատութենով ձեռք բերած իւրաքանչիւր տեղի տեղական հայերի սիրած երգերը, խաղերը և տաղերը։ Այս երգերի և տաղերի մեզ հայտնելու համար մենք խոստանում ենք վարձատրութիւն, որի մասին խնդրում ենք յայտնել մեզ պայմանները մեզ հետ նամակցելիս կամ անձամբ տեսնուելիս. բայց ի դրանից երգերի և տաղերի մեզ հա-

ղորդողների անունները պարտականութիւն ենք համարում մեզ համար հրատարակել մեր ապագայ տպելու երգարանների մէջ։ Միայն այս կաղաչենք այսպիսի աշխատաւորներից, որ ամեն կերպով ջանք անեն ժողովրդի երգուածը ուղիղ և ճշդութենով գրելու և երգերի աւելի ճշդութենին հասնելու համար պէտք է մէկ քանի երգողներից իմանալ միևնոյն երգը։ Կը խնդրենք նմանապէս այդպիսի անձներից, որ եթէ այս երգարանի մէջ տպուած երգերից մէկ քանիսը ճիշդ չեն և սխալներ ունին, այդ երգերի ճիշդը իմանան իւրաքանչիւր այդպիսի երգի հայրենիքում բնակուողներից և հասցնեն մեզ. այսպիսի աշխատութիւնը կը հաւասարուի նոր, չըտպուած երգի ձեռք բերելուն։

Դառնալով այս Լիակատար Երգարանին, կասենք որ սրա մէջ մենք ամփոփեցինք, ինչպէս տեսնում էք, 109 հատ մեր այժմեան կենդանի երգերից, խաղերից և տաղերից, միջից դուրս ձգելով այն ոտանաւորները, որոնք թէպէտ և տպուել են մինչև այժմ զանազան Երգարանների մէջ, բայց որովհետև մէկ նշանակուած եղանակ չունին երգելու համար, չը մտցրինք այս Երգարանի մէջ։ Աւելորդ չենք համարում յայտնել նմանապէս, որ Երգարանիս մէջ գտնվում է մինչև այժմ միւս Երգարանների մէջ չը տպուած երգերից 15 հատ (12-դ, 22-դ, 28-դ, 40-դ, 49-դ, 54-դ, 56-դ, 57-դ, 61-դ, 70-դ, 73-դ, 74-դ, 80-դ, 92-դ և 95-դ), նմանապէս կան սրանում 4 հատ երգեր (33-դ, 62-դ, 88-դ և 90-դ), որոնք թէպէտ տպուած են լրագրերումը, օրագրերումը և առանձին գրքերումը, բայց Երգարանների մէջ չեն եղել մինչև այժմ տպուած և բաց ի դրանից Երգարանիս 34-դ և 69-դ երգերը չեն դուրս տպուած Երգարաններից անփոփոխ, այլ ուղղած են և լիակատարացրած ձեռագրերի և երգողների միան ունեցածների համեմատ։

Երգարանիս համար առանձին ցանկ չը շինեցինք՝ այդ բանն աւելորդ համարելով, որովհետև երգերը արդէն դասուած են այբբենական կարգով և այդպիսով առանց ցանկի էլ հեշտանում է նրանց գտնելը։

ԹԻՖԼԻՍ։ Գ. Տէր Աղեքսանդրեանց։

1871 Մարտ։

Ս.

1.

Ասում ես դիմացիր, ոնց դիմանամ, մի՞թէ ես եմ քար,
դարդիս արա՛ մէկ ճար.
Կեանքս մաշել ես բոլորովին ամենը խապար.,
էս ցաւն է դժուար.
Էսքան նեղութիւն ինձի մի՛ տար անողորմաբար,
ով դու իմ սիրահար:

—

Շատ վախտ է քաշում եմ կարօտդ չես դալի երես,
մինչ ե՞րբ դիմանամ ես.
Իմ քամբաղդութիւնս ինձի բաւ է, մի՛ անիլ էդպէս,
կեանքս արեցիր կէս.
Ողորմութիւն արա՛ աղքատիս, քաշի՛ մօտդ տա՛ր,
տանջիլ մի՛ չարաչար:

—

Վախտ որոտում ես, վախտ ամպում ես, մթնում ես խիստ շատ,
անձրևում ես կաթ կաթ.
Վախտ հարաւային հողմոյ նման հնչում ես խիստ սաստ,
ես ընում եմ զգաստ.
Վախտ բարկանում ես, վախտ նեղանում, կամենում ինձ չար,
սարսափում է աշխարհ:

Զարակաճների խօսքերը քեզ խրատ ես արել,
խիստ շատ վատ ես արել.
Ուրիշների հետ սէհր անելը ադաթ ես արել,
ինձի եադ ես արել.
Ես իմ բաղդից եմ գանգատաւոր միշտ և մուղարար,
ինձ չէ տալիս դադար։

—

Անդին պարդևցդ պարդևնա ի քոյոց զքոյս,
բողբոջ ես նորաբոյս.
Ե՛կ սէր իմ ազնիւ, աղաչում եմ, խղճա՛ խղճալոյս,
տո՛ւր բաւականին յոյս.
Եվ դու ինքդ էս անտանելի ցաւին գտի՛ հնար,
ինձ մի՛ թողուլ անճար։

—

Ցաւերդ ինձ ես տալիս, ուրիշներին քաղցր խօսքերդ,
ինձ էս ա քո խէրդ.
Ինձնից աւելի, ասա՛ տեսնեմ, ո՞վ ա քո տէրդ,
ինձ նա տայ քո սէրդ.
Դու քու դարդերդ լաւ գիտես խեղճ Ադամ Ազբար,
խախին ի՞նչ ա խաբար։

2.

Ասի թէ սիրեմ զքեզ,
Դու 'ի քեզ նազներ ելար.
Քա՛ւ ալ. թէ անցաւ աշխարհս,
Որ այլ քեզ չկայ սիրոյ ճար։

—

Երթամ, մեկնիմ, այլ սիրեմ,
Որ աչունքն քեզ նմանի,

Զանուանդ նորա դնեմ,
Որ լսես, սիրտդ նուաղի:

—

Թէ նուշ էիր, աչացս ելար,
Թէ շաքար, ինձ անպիտանացար.
Թէ դուն սիրելու խնձոր,
Ալ իմ աչքիս մի՛ երևնար:

—

Երթամ Սուրբ Սարգիս մանում,
Անիծեմ, որ դուն իմանաս.
Ոչ կաղնաս ու ոչ կուրնաս,
Սարկարտան մնաս քան զիս:

—

Քանի՛ ու քանի՛ ասեմ,
Վարդ մի՛ սիրեր, փուշ ունի,
Գնա՛, մանիշակ սիրէ՛,
Փուշ չունի, անուշ հոտ ունի:

—

Վարդին բացուած մի՛ սիրեր,
Որ գայ 'ի ծոցդ թառմի.
Վարդն պուլպուլիկ սիրէ,
Որ գայ 'ի ծոցդ բացուի:

---

3. (*)

Ափսոս քեզ Հայոց խեղճիկ ժողովուրդ,
Ցիրուցան ելաք անմեղ անխորհուրդ.
Գերի գնաման աք դէպ 'ի Խորասան,
Քաղցած ու ծարաւ, տկլոր թշուառական:

(*) Զուղայեցու սուգ:

Խարիւր ու խազար ցաւի դիմացաք,
Ձեր քաղցը երկրէն ոտք դուրս չդրաք,
Խիմի ձեր խօր մօր գերեզման թողած,
Տներն ու ժամերն ուրիշի տուաք։

—

Էն սիրուն դաշտերն, մեծ մեծ քաղաքներն,
Քաղցրիկ ջրերն, ձեր շէն գեղերն
Ո՞ւմն աք թողման, որ գնաման աք,
Էդպէս կու լինի՞, որ մոռանում աք։

—

Վախում ամ էնպէս մոքերնուցդ ընկնի,
Ինչքան որ ողջ աք մոքերնուդ չընկնի.
Բարի ձեր որդւոց, թոռանց պատմեցէք,
Էսպէս խայրենիք քանդած թողեցիք։

—

Մասիսի անունն, Նոյայ տապանի,
Արարատ դաշտի, Սուրբ Էջմիածնի,
Մեր խոր Վիրապի, Սուրբ Գեղարդ, Մուղնի,
Զրմոռանանք մինչ 'ի օրն դատաստանի։

—

Աչքս կուրանար, շլինքս կոտրուէր,
Խեղճ . . . . . քեզ էդպէս չտեսնէր.
Թէ մեռած էի, լինձ երանի էր,
Քան թէ կենդանի, աչքս բաց լինէր։

---

4 (*)

Այն ի՞նչ ազգ է, այն ի՞նչ ցեղ է,
Որ միշտ անկախ է,

(*) Ուսանողական երգ, գերմաներէնից թարգմանուած։

Որոյ տունը ամեն տեղ է
Ու անփող ուրախ է:
Ուսանողն է այն զուարթ մարդը,
Կենաց քէֆն է նորա ցանկացած բանը: } 2 անգամ

—

Այն ո՞վ է արև ծագելիս՝
Ինքն էլ զարթում է,
Ու քաղցր ձայնով երգելիս՝
Փողոցներ չափում է:
Ուսանողն է և այլն:

—

Ո՞վ երբէք սէրից չի վախում՝
Ու միշտ հարս ունի,
Եւ իր անձոխ, անպերճ կեանքում
Դարդ ու հոգս չունի:
Ուսանողն է և այլն:

—

Ո՞վ է միշտ առաջին կռվում,
Հայրենեաց համար,
Փայլուն գինին շիշով կոնծում,
Ուրախ, բայց արդար:
Ուսանողն է և այլն:

—

Եղբա՛ր քէ, դուք որ այն ազգիցն էք,
Գինին պատուեցէք,
Ուսանողական պատիւը
Հաստատ պահեցէք.
Իրաւ մենք ենք այն զուարթ ազգը,
Կենաց քէֆն է ամենուս ցանկացածը: } 2 անգամ

5.

Արէք որ երթամք,
Բիւլբիւլի երամք,
Ծաղիկ բացուեցաւ,
Միշտ փառք ցնծամք։
Արի՛ գովելի,
Գովելի լի՛լի։ } (3 անգամ)

—

Ծաղկունքն գարնան,
Բիւլբիւլ աննման,
Զայնիւ ցնծալով,
Եղանակ բաւնան։
Արի՛ գովելի և այլն։

—

Զայնիւ երգեցուք,
Սիրով գոչեցուք,
Եւ 'ի դէմ վարդին,
Միշտ ողջոյնեցուք։
Արի՛ գովելի և այլն։

—

Եւ մեք երգեցուք,
Սիրով գոչեցուք.
Եւ 'ի ժամ գարնան՝
Միշտ փառս տացուք։
Արի՛ գովելի և այլն։

—

Եկայք սիրեցուք,
Զմիմեամբք փարեցուք,
'Ի հանդէպ վարդին
Պարուք բերկրեցուք։
Արի՛ գովելի և այլն։

—

Ահա՛ ցնծացուք,
'Ի պարտէզ հասցուք,
Դու միշտ ցանկալի,
Ե՛կ, ուրախացուք։
Արի՛ գովելի և այլն։

—

6.

Ամէն սազի մէջըն գովաց դուն թամամ դան իս, քամանչա.
Նաքազ մարթ քիչ չի կանայ տեսնի դուն նըրա պան իս, քամանչա.
Ղասա արա՛, էլ լաւ օրերուն էդիվըն հանիս, քամանչա.
Քիզ ինձնից ոչ կանա խըլի, աշուղի բան իս, քամանչա։

—

Անգաձըդ էրծաթէն պիտի, գըլուխըդ ջավահիր քարած,
Կութըդ շիրմայեմէն պիտի, փուրըդ սաղափով նախշ արած,
Սիմըդ օսկէն քաշած պիտի, էրկաթըդ փանջարա արած.
Օչով ղիմեթըդ չի գիդի, լալ ու ալման իս, քամանչա:

—

Ճիպուտըդ վարաղնած պիտի, թահրունեննայ հաղար ռանգով,
Զարըդ ռաշի կուդէն պիտի, վուր դուն խօսիս քաղցըր հանգով.
Շատին զարթուն կու լացացնիս, շատին կու քընեցնիս բանգով.
Անուշահամ գինով լիքըն դուն օսկէ թաան իս, քամանչա:

—

Ածողիդ էրկու կու շինիս, առաջ չայի ղափա գուգիս.
Կու մեճըրվիս այիվնումըն, պարապ վախտի ըսիա գուգիս.
Եվ վէր գու քաս մէջլիսումըն, քաղցըր զօղ ու սափա գուգիս,
Բոլորքըդ գօզալնիր շարած՝ մէջլիսի կէսն իս, քամանչա:

—

Շատ տըխուր սիրտ կու խընդացնիս, կու կըտրիս հիվընդի գուղըն.
Եվ քաղցըր ձայնըդ վիր կօնիս, բաց կուլի հիդըդ խաղօղըն.
Խալխին էս իլթիմաղն արա՛, ասին „ապրի՛ քու ածողըն,,.
Քանի սաղ է Սայեաթ-Նովէն, շատ բան կու տեսնիս, քամանչա:

7.

Անգաձ արա՛, բարիթավուր,
Դընա՛, հիդըն խաղ մի՛ անի,
Եարի սիրտն դաղ մի՛ անի,
Էտ կըրակըն չաղ մի՛ անի.
Զաղ շուռ արի
Եարսուն տարի,
Եարին բեդամաղ մի՛ անի:

—

Բեդամաղ չըլի միզանից,
Զըհիռանայ անմիղ բանից,
Եարըն նազով հոքիս հանից.
Հանած ծառ է,
Էշխով վառ է.
Չի վախենայ Սուլթան խանից:

—

Խանի պէս դիվան իս անում,
Շահզադի պէս սան իս անում,
Էտ ինչ թավուր բան իս անում.
Բանըդ բանդ է,
Պռօշըդ ղանդ է,
Քաղցըր լեզվով Ջան իս հանում:

—

Ջան չունիմ եարի ձեռնեմէն,
Հիւանդ իմ էշխիդ կըռնեմէն,
Դիղ անիս ծուցիտ նըռնեմէն.
Նըռիդ օսկով,
Քաղցըր խօսկով,
Կրակ իս վէր ածում բերնեմէն:

—

Բերնիդ մէջն լալ է, գոզալ,
Հաքիդ զարըն ալ է, գոզալ,
Էտ ինչպէս խիալ է, գոզալ,
Էտ խիալով նազ իս անում.
Եար, ամա՛ն:

—

Նազ իս անում խիատարիս,
Հիդ աշխարիս բարեբար իս,
Հընդու էկած ղալամքար իս.
Ղալամ քաշած,
Ջանս է մաշած,
Ջանս հանեցիր, Ջադուքար իս:

—

Ջադուքար իս փէլ ու փանդով,
Շիրազու շուշա իս ղանդով,
Այնիրանդ իս խաթաբանդով.
Ջամ հալիլա,
Լալ ու թիլա,
Ջանս հանեցիր էտ փըրսանդով:

—

Էտ փըրսանդով համ իս անում
Դաստամազըդ նամ իս անում,
Ախ խաթրըդ Ջամ իս անում.
Ջամ իս Զինի,
Դոշդ է սինի,
Շամամնիրեդ դամ իս անում:

—

Դամու դավրան իս համաշա,
Դաստա դաստա մազըդ քաշ ա,
Ղումաշ զարով
Կու լայ տարով
Օվ քիզի գուքայ թամաշա:

—

Թամաշա իս՝ վարթի ռանգ իս,
Ծով տեսած օսկու մահանգ իս,
Սանթուր ու քամանչա չանդ իս.
Բարակ ձէնով սազ իս անում.
Եար ամա՛ն:

Սազ իս անում, դուր իս գալի.
Բաղչի մէջըն ջուր իս գալի.
Փունջ մանիշակ նուր իս գալի.
Նուր գովիմ քի,
Անպատմելի,
Վարթի մէջըն շուռ իս գալի:

—

Շուռ իս գալի բըլբուլի պէս,
Հուտըդ գուքայ սընբուլի պէս,
Սուփրի մէջըն թայգուլի պէս.
Դաստա կապած,
Ռեհնին կըպած,
Բայ իս էլի դուն գուլի պէս։

—

Գուլ իս կոկոր տերևակալ,
Չիս թառամի, տրևակալ,
Թաքավուր իս բարեակալ.
Բարով տամ քիզ,
Մըտիկ տու միզ
Չէ թէ ամսով, օրևակալ։

—

Օրն ի օրըն շատանում իս,
Էշխի մէջըն մոգանում իս,
Սըրտի դարդըս հիդ անում իս.
Հիդ արա՛, տի՛ս,
Թէ թաբիր իս,
Խլքն գըլխէս հատանում իս։

—

Տարար խլքըս, հէյրան արիր,
Բարակ միչկըդ սէյրան արիր,
Էտ կըրակով բիրեան արիր.
Հալբաթ մահիս հաղ իս անում.
Եար, ամա՛ն։

—

Հաղ չունիմ իսին եարեմէն,
Չիս ջոգվում անգին քարեմէն,
Թաք չանցկենաս եղրարեմէն,
Խղրար անիս,
Հոքիս հանիս,
Պըրծընիմ ահ ու զարեմէն։

—

Ահ ու զար իմ քաշում, ամա՛ն,
Քիզնից ուրիշ չունիմ գումա՛ն,
Ծուցիդ մէջըն չայիլ չիմա՛ն.
Չիմա՛ն ասիմ,
Մուրախաս իմ,
Սըրտում ունիմ խղրար իմա՛ն։

—

Խղրար իմանէն չանցկենամ,
Առանց քիզ մին օր վուռնց կենամ,
Բերնումըս դընիմ սանձ, կենամ.
Սանձահարիմ,
Սիրտըս վառիմ,
Անհընանալու գանձ կենամ։

—

Գանձ իս սիրով ու սիրեկան,
Ղիմէթ ունիս անգինական,
Լալ ու ջավահիր պատուական.
Պատիւ անիմ,
Քանի ջան իմ,
Զուն աշխարս է անցողական։

—

Անց մի՛ կենա՝ թէ հալալ իս,
Մի մոր ծըծած, մի մոր դալ իս,
Ղաբուլ անիմ թէգուզ հալիս,
Զունքի իլթիմաղ իս անում.
Եար, ամա՛ն։

Իլթիմաղբս էս է, ջանըմ.
Օրըս հիղբդ կէս է, ջանըմ.
Եշխըն էստու ոէս է, ջանըմ.
Ջանըմ, ջան իս,
Աննըման իս.
Աշխարս ուս ու տիս է, ջանըմ։

—

Ես ու տիս արա՛, իմացի՛,
Մըտիկ արա՛ աղ ու հացի,
Թաք իղբարին դըրուստ կացի՛.
Կա՛ց իղբարին
Ահվի շարին՝
Եվ մեռանիմ վըրէս լացի՛։

—

Լաց ըլիս՝ աչկըդ զայ անիս,
Դաստա ռեհան փայ անիս,
Ջաու ջուր իս,
Խիստ տըխուր իս.
Աղալթըդ Շահի անիս։

—

Շահի զուրիաթ թաբաղըն,
Զի հարցընի դուդուն դաղըն,
Վայ թէ էլ չըխօսիս վաղըն.
Վաղըն կու լամ,
Նըստիմ ու լամ,
Ասիմ բարիթավուր խաղըն։

—

Խաղ իս էլի, Սայեաթ—Նովա.
Դաղ իս էլի, Սայեաթ—Նովա.

Բաղ իս էլի, Սայեաթ—Նովա.
Գլուխըդ փիանդազ իս անում. Կար, ամեն:

8.

Ամառուան քաղցր և անոյշ հովերն,
Մերձեալ հնչեն մեղմով թափոյդ քովերն,
Արդ ծածանին աչաց լցեալ ծովերն,
Բացի՛ր, բացի՛ր, իմ կարմիր վարդ պատուական,
Գեղդ նման արեգական վառվառման:

—

Քանի ողբամ, նոր ի նորոյ խոցոտիմ,
Զփայլուն գեղդ 'ի միտ բերեալ բոցոտիմ,
Յորդ արտասուք ցայգ և ցերեկ թացոտիմ,
Բացի՛ր Լայն:

—

Զմեռն էանց, ես քեզ կարօտ մնացի,
Այրիմ, տապիմ որպէս 'ի հուր հնոցի,
Քեզ շատ օրեր, ես 'ի ձեռաց գնացի,
Բացի՛ր Լայն:

—

Տեսեալ զծաղկունս՝ զամեն ինձ վուշ վարկանեմ,
Թևօք բաղխեալ զսիրտ իմ քնքուշ հարկանեմ,
Յաւ իմ սրտի ահա քեզ յուշ արկանեմ,
Բացի՛ր Լայն:

—

Արքայարան Բիւզանդիոյ մեծ շինի,
Տեղ և բնակ յարմարեալ քեզ հարկ լինի,

Նաւակատեաց յիշատակ քո, տօն լինի,
Բացիր Հայլն։

9.

Առաւօտ լուսաբեր Հայաստան երկրի,
Բուրաստան ծաղկախիտ կողմանցն Հիւսիսի.
Նախկին լուսաւորիչ, պսակ պանծալի,
Թադէոս Առաքեալ՝ ընդէ՞ր կաս Հեռի։
Ո՛Հ ո՛Հ, մանկունք Սիօնի (2 անգամ.)
Պար առեալ ցնծացէք 'ի սոյն խնջոյի։

—

Ընդարմացեալ բուսոց ջուր կենդանութեան,
Հոգւով տրտմեցելոց բաժակ բերկրութեան.
Դու պարիսպ Հաւատոյ, նեղելոց պաշտպան,
Թադէոս Առաքեալ Հայլն։

—

Երգնակ աւետաբեր կենաց փրկութեան,
Շուշան լուսատեսիլ գուշակող գարնան,
Ցուցար մեզ բարեաց շնորհ էական,
Թադէոս Առաքեալ Հայլն։

—

Զօրութեամբ Սուրբ Հոգւոյն զաշխարհ արարեր,
Թորգոմեանն ազգի լոյս մեծ ծագեցեր,
Զսուրբ կոյսն Սանդուխտ յերկինս վերացեր,
Թադէոս Առաքեալ Հայլն։

10.

Արեգակ արեգակ դուս արի,
Հէրն ու մէրդ էկիլ է,
Օսկէ բլիթ բերիլ է,
Պատի ծակը դրիլ է,
Մուկն էկիլ է տարիլ է,
Կատուն էդնէն վազիլ է,
Գոմշի վուտը կոտրիլ է,
Աղամանը վիթիլ է:

11.

Անի քաղաք նստեր՝ կուլայ, չկայ ըսող մի՛ լա, մի՛ լա,
Կսես՝ քիչ է, թող, ճնայ՝ լայ. ախ ե՞րբ լսեմ՝ մի՛ լա, մի՛ լա.
Շատ ցաւերով կայրիմ՝ տապիմ, չունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խղճալոյս դայ՝ մօտանայ, հէչ չէ ըսէ՝ մի՛ լա, մի՛ լա.
Ա՛յ հայ տղայ, խղճա՛ ինձի, տես՝ թէ քո Անին ինչպէս է,
Հերիք ես լամ, դու չգթաս, չէ՞ քո Անին շատ ափսոս է:

—

Ախ ու վախով օրերս անցաւ, լալէն աչքերս կուրցաւ,
Որբ ճնալն ինձ վիճակեցաւ, բաղդս բնաւ ղիս մոռացաւ,

. . . . . .

—

Անին եմ շատ մարդաբնակ, ճնացեր եմ դառն աւերակ,
Իմ լացն, իմ կոծն, իմ աղաղակ՝ անտէր որբերու նմանակ.

Երբեմն էի շատ անման, Հայոց քաղաք արևելեան,
Աւերեր եմ սեփահատակ, Նատեր՝ կուլամ ես միայնակ:

—

Եկար՝ տեսար, դարձեր՝ կերթաս, լալով կես՝ „բարեաւ մնաս„
Ատուած սիրես չմոռանաս, Մասիս սարին երբ մոտենաս,
Ըսես իմ քաջ Արարատին՝ „Նատեր՝ կու լայ քո խեղճ Անին„.

. . . . .

12.

Ասում են թէ սիրեկնի հետ սէր չունիմ,
Ցեռը ընկնիս, զարարն աւել խէր չունիմ.
Իմ տեսնողն ասում է դարդեր չունիմ,
Վայ, ի՞նչ անեմ՝ դարդերիս ընկեր չունիմ.
Հենց գիտում են սրտումս ցաւեր չունիմ:

—

Լսիր ցաւըս, ինձ դեղ արա, սիրեկան,
Ծոցիդ միջին մէկ տեղ արա, սիրեկան.
Որ տեղ գուզես էն տեղ արա, սիրեկան,
Թէ մարդ խօսի, ինձ մեղ արա սիրեկան.
Աշխարումս քեզնից աւել տէր չունիմ:

—

Իժան չէ սէրդ, գիտում եմ թանգ ունիս,
Քո սիրողիդ կըխմացնես բանդ ունիս,
Վաղ գիտէի, որ էդպիսի հանդ ունիս,
Երկնքի պէս օրը հարիւր ռանգ ունիս.
Լուսնին ասում է քեզ պէս պատկեր չունիմ:

—

Գեղնից չունեմ մէկ սալամ տալ, ինչ ասեմ,
Աւել չունիս գնալ ու գալ, ինչ ասեմ,
Դուն իղբալով, ես բէիղբալ, ինչ ասեմ,
Երեսիդ կայ թանգագին խալ, ինչ ասեմ.
Խալիդ գինը թէ գին դնեն, ջէր չունեմ:

—

Սէր ուզում ես, ինձ անես, լաւ կանես,
Լաւ անունդդ աշխարհումը չաւ կանես,
Սիրահարիդ ձեռումդդ գրաւ կանես,
Թէ մուռանաս նրան մեծ դարդ ու ցաւ կանես.
Նա էլ կասէ, ես ողջում՝ ախպէր չունիմ:

—

Ինչով չիմացար քու լաւ ուզողդ ով է,
Քանի որ սաղ է, պէտք է համաշա գովէ,
Սէրը որ կայ, մէկ անպատմելի ծովէ,
Մէկ օր արի՝ քու գամալուն բարովէ.
Ճանապարհին մնալով աչքեր չունիմ:

13.

Արկածք Հայոց ժամանակին ընդ անիւ
Փշրին տակաւ, մինչդեռ սիրոյ համբուրիւ
Ուխտեմք 'ի սէր եղբօր՝ զկեանս դնել գրաւ,
Օ'ն անդր 'ի մէնջ այր ընկերին լարել դաւ:
Արացաւ 'ի մէնջ բաղդն անհամբոյր.
Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր,
Եղբայր զեղբայր գգուէ սիրով,

Ձոխն աղքատին մատչի գթով։
Լանց գիշեր արդ առաւօտ,
Ի ցող ժպտին Մասեաց արօտ,
Եւ վառ 'ի վառ շողշողելով,
Լոյսն արեգին ծփայ 'ի ծով։
Հնապա մանկունք,
Վեհ քաջազունք,
'Ի գլուխ պսակ
Ի յաղթանակ,
Առեալ նուագս,
ՅԱրագս արագս,
Օ՛ն փութացուք,
Օ՛ն երգեցուք.
Մեր եւ գութ
Մեր պըսակ,
Առ մեզ բաղդ
Հրաւիրակ.
Ցնծացեն
Որք լսեն,
Թէ՝ "ուր Հայ,
Զիք՝ անդ վայ։"

2 անգամ

14.

Ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի՝ ո՞ւր ես մտքով մեկնած,

Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ,
Վշեայ կտաւը քու հանդէպ փրռած։

—

Շուռ տուր աչերդդ, նայէ դէս ու դէն,
Ցեռ քեզ ծաղրում է անմիտ ամբոխը.
Զարթեր, սիրելի, այդ անոյշ քնէն,
Գոնէ մի անգամ հանէ քու ոխը։

—

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգւով,
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկին, . .
Յանկարծ աչքերդդ փայլեց տուրը շնորհքով,
Հսկայի սիրտդդ թնդաց խիստ ուժգին։

—

Ամիր վրձինդ, թաց արիր ներկով,
Շունչ տուիր անշունչ կտաւին.
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,
Քեզ անկարելին անյայտ է բնաւին։

—

Սէր, ատելութիւն, հանճար, բարկութիւն,
Տուիր պատկերին մատիդ շարժուածով.
Ինչ որ չի յայտնեց ճարտարի լեզուն,
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածով։

—

Ապշեց ամբոխը, վազեց, յառաջեց
Քու կենդանագիր պատկերի դիմաց,
Ծնկաչոք զմռուռս ու հալուէ խնկեց,
Գոչեց մեծաձայն „դա է իմ Աստուած„։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀԱՍՍՐ

Բայց ա՛խ, քու անքուն ժամերու ճիգը,
Քանի մի արծաթ հաղիւ գին դրին.
Ստեղծողդ դարձար քու խեղճ խրճիթը,
Ակեր շարեցին շուրջ քու պատկերին։

15.

Ահա՛ սուրհանդակի սայլակը,
Ուղիղ ճամբով է դուրս թռչում,
Եւ Վալդայի տխուր զանգակը,
Կամարի տակ է զողանջում։

—

Արթուն սայլորդս գիշերուայ դէմ
Իւր վիճակի վերայ տխրեց,
Եւ սիրեկնի աչաց կարօտը
Նա տխրագին ձայնով երգեց։

—

„Կապուտ աչեր, կապուտ աչեր,
„Կորիճիս կեանքը մաշեցիք,
„Ինչո՞ւ ինչո՞ւ դուք չար ոսկաներ,
„Ինչո՞ւ արտերս բաժնեցիք։

—

„Մնաս բարև իմ տուն հօրական,
„Մնաս բարև իմ սիրեկան,
„Ես կը հանդչիմ գինչ բոց կրակին
„Այս անբընակ դաշտի միջին։

—

„ Արևիս լոյսը խաւարել է,
„ Այս աշխարհումն էլ որը եմ ես,
„ Սրտիս կարօտը աղջկայ տեսնելից,
„ Մինչև 'ի մահ զրկած եմ ես։

Այս որ ասաց՝ շարժեց մարակը,
Երեք ձիանց մէջքին խփեց,
Իր սիրեկնի պարզ յիշատակը
Այսպէս երգով նա փարատեց։

16.

Արդ հրամանովն Աստուածային
Բազումք եկեալ ընդ փեսային,
Կալեալ ձեռօք զիս կուսանին,
Մնաք բարով ես գնացի.
Շատ խնդացի և շատ լացի,
Նանի Ջան մնաք բարով ես գնացի։

Նանի սիրես լոյս հաւատդ,
Զմոռանաս քո զաւակդ,
Հալալ անես աշխատանքդ,
Մնաք բարով ես գնացի.
Շատ խնդացի և շատ լացի,
Նանի Ջան մնաք բարով ես գնացի։

Ով իմ ազնիւ հայր իմ, դուստր մայր իմ,

Զը վշտանաս թէ բաժանիմ.
Նանի սիրես լոյս հաւատդ և այլն:

—

Ահա տամ քո բալանին,
Ա՛ռ իմմէն տուր քո հարսին.
Նանի սիրես լոյս հաւատդ և այլն:

17.

Աշխարումը իմն գուն իս,
Բեմուրվաթ իս, մուրվաթ չունիս,
Պրուշներիդ նաբադ ունիս,—
Ղանդաւ շաքարի նման իս:

—

Դադա պիտի՝ թարիփդ ասէ,—
Ակռեքդ եաղութ ալմաս է,
Ռանդդդ Փրանգի աղլաս է,—
Զար ղալամքաբի նման իս:

—

Աղիրդդ նման ռեհանի,
Գուն ուրիշ խիալ մի՛ անի,
Ռահմ արա՛, հոքիս մի՛ հանի,—
Մուրվաթով՝ եարի նման իս:

—

Վունց դիմանամ էսչափ չարին,
Աչկեմէս կաթում է արին.
Սայեաթ—նովա, նազլու եարին
Գինած նոքարի նման իս:

Բ.

18.

Բաժակներ առնուն՝ եղբարք,
Լիք լիք բաժակներ գինով,
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անոյշ համով։

—

Բերներիս ասենք անվախ,
Չէ՛ դա խառնած կամ խարդախ,
Նեկտար է և ո՛չ գինի,
Խմենք՝ մեզ անոյշ լինի։

—

Արաքսայ ջրով ցողած,
Հայոց արևով հասած,
Հայոց աղջիկ է քաղել,
Քնքոյշ ձեռներով քամել։

—

Այս բերքն է Հայոց երկրէն,
Հայաստան տնկած նոյէն,
Անմահ, երկնային գինին
Նա խմեց, երբ ինքաւ սարէն։

—

Այս անոյշ գինին խմողը
Սրտէն թո՛ղ հանէ ոխը,

Ամենքս էլ ասենք „ամէն„
Որ շատ տայ մեզի ամ էն։

19.

Բարև քեզ ԸՍտեփան,
Ես ինչ հրաապի բան,
Ես եկայ քեզ պատմեմ,
Քեզնից վասխերը առնեմ։

—

Ես սատ խոնար մարդ եմ,
Ոց գէր, այլ լաղար եմ,
Բայց իմ սատ անոյս հոգին
Ոսկիի պէս ունի գին։

—

Թէ ուզում ես մօրթէ,
Թէ ուզում ես ճարթէ,
Թէ ուզում ես թաղվեմ,
Տուր նախ վասխերը առնեմ։

20.

Բըլբուլի հիդ լաց իս էլի,
Վարթի նըման բաց իս էլի,
Վարթաջըրով թաց իս էլի,—
Թաց իս էլի.

Չկայ քիզի նըման, չկայ քիզի նըման.
Քիզ նըման, քիզ նըման,—
Դուն իս անընման։

—

Սիրունութինդ էլաւ արբաք,
Մազիր ունիս՝ սիմ ու շարբաք.
Քի սաղ գուքայ ղուշլու զարբաք,—
Ղուշլու զարբաք,
Չկայ քիզի նըման, չկայ քիզի նըման և այլն։

—

Երէսըդ է շամս ու զամար,
Ջանըս դուս գուքայ քիզ համար.
Մէջիդ ունիս օսկէ քամար.
Օսկէ քամար,
Չկայ քիզի նըման, չկայ քիզի նըման և այլն։

—

Հաքիդ զարըն ալիս արի,
Բըլբուլի հիդ լալ իս արի.
Բարկ էրեսիդ խալ իս արի,
Խալ իս արի.
Չկայ քիզի նըման, չկայ քիզի նըման և այլն։

—

Դարդըս ասիմ՝ կու լան սարիր.
Էս ի՞նչ բան էր, վուր դուն արիր,
Սայեաթ-Նովուն ջունուն արիր.
Ջունուն արիր.
Չկայ քիզի նըման, չկայ քիզի նըման և այլն։

—

21.

Բաղումն վարդն ինչ կանեմ,
Արտումն դարդն՝ ինչ կանեմ,
Քանց քեզանից լաւն ինչ կանեմ.
Ծագիր արև, լսիր ինձի.
Հոգւով, սրտով ոսկէ կուլով,
Թէ կուզ մեռնիմ, միտդ բեր ինձ,
Ա՛խ աչքերուդ, աչքերուդ,
Սև աչքերուդ, աչքերուդ:

—

Թէ կուզ սպանես, քեզ չեմ ձէն տա,
Մինչև հասատա ումիկ չես տա,
Վա՛յ թէ սրտումն դանակ տաս,
Ծագիր արև, լսիր ինձի ևայլն:

—

Հոտ կալնելու վարդի ճուղք ես,
Ափսոսում եմ, որ մէնակ ես,
Հնդու եկած աղունակ ես,
Ծագիր արև, լսիր ինձի ևայլն:

—

Ամանում ես արեգակին,
Ու խանդիսխան լուսնիակին,
Թանգ ես ծախում խիստ նազանի,
Ծագիր արև, լսիր ինձի ևայլն:

Գ.

22.

Գիշեր ցորեկ կը հառաչեմ ա՛խ օրիորդ քու սիրուդ,
Սև աչքերուդ վարդ այտերուդ զարնուեցայ ի՞նչ օգուտ.
Աչքերուդ, այտերուդ և ոսկեթել մազերուդ,
Միայն քեզի սա կաղաչեմ որ ունենաս քիչ մը դութ:

—

Գիտես անգութ որ պատանին չի դիմանար այս ցաւուն,
Քեզի համար ալ չի դադրիր աչքիս արցունքն օրն 'ի բուն.
Քեզ միայն կ'յիշեմ թէ քուն ըլլամ թէ արթուն,
Թէ մութ ըլլայ միտքս կուգաս նոյնպէս և առաւօտուն:

—

Շատ աղուորներ թէպէտ տեսայ, սիրտս միայն քեզ սիրեց,
Ո՜հ չեմ գիտեր, թէ քու սէրդ սրտիս մէջ ո՛վ արծարծեց.
Ա՛խ քու խաթուն մարիկդ իրեն փեսայ ո՛վ ընտրեց,
Գերի կ'ըլլամ քու մօրկանդ եթէ զիս դուրս չի ձըգեց:

—

Ո՞ւր էր որ սա աղջիկը ինձի ըլլար ամուսին,
Խիստ երջանիկ պէյէրու պէս ապրէինք 'ի միասին.
Թոմպուլիկ կլորիկ զաւկներնիս մեր չորս դին,
Ես ծխէի իմ սիկառս, ասղնեգործեր իմ տիկին:

—

Քեզի համար թափառական ես սար ու ձոր ընկեր եմ,
Քեզի համար ճըզիկ ճըզիկ ոսկոռ ու մորթ եղեր եմ.
Ալ բաւական իս խոցես, ահա ոտքդ ընկեր եմ,
Ըսէ ինձի բառ մ'երջանիկ, թէ ես ալ քեզ կըսիրեմ:

23.

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաշէն,
Եկեալ աստ զամբիւղօք ի Հայոց երկրէն,
Յուսամ, զի Հայ տիկնայք և պարոնայք Հնդկաց
Բարձր գին տայցեն իմ սիրուն զամբիւղաց։
Ա՛ռ զամբիւղս (3 անգամ) յօտար աղջկանէս։

—

Զարարատ, զՏիգրիս և զԵփրատ Թողի,
Միանայկ շրջիմ աստ յեզերս Գանգէսի.
Պանդուխտ եմ, օգնեցէք անտէրունչ անձինս,
Զի ծնողք ձեր յարաջ աստ պանդուխտ էին։
Ա՛ռ զամբիւղս և այլն։

—

Զամբիւղք իմ են յարմար ասղնեգործութեան,
Պահել անդ զմատնոց, զթել, զասղաման.
Իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսին,
Երբ խաշինք և գառինք զինև խայտային։
Ա՛ռ զամբիւղս և այլն։

—

Գանձք բազումք, ցաւք բազումք կան յայսմ աշխարհի,
Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երկրի.
Զայգի մի ունէի, զամբիւղ գործէի,
Լոկ կաթամբ և պտղովք երջանիկ էի։
Ա՛ռ զամբիւղս և այլն։

—

Աստ սերկևիլ, ծիրան և խաղող չիկայ,
Բայց միայն վարիա, քիլա և ադա,

Սիս ե՞րբ էլ էլ զի արժանի եղեց վերատին
Ճաշակել զպտուղս իմոյ պարտիզին։
Ա՛ռ զամբիւղս և այլն։

—

Ապա դուք լաւ տիկնայք զամբիւղս իմ առէք,
Գիւղական աղջկանս սիրով օգնեցէք.
Զի դարձեալ յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝
Զերախտիս ձեր առեալ գովեցից բազմօք։
Ա՛ռ զամբիւղս և այլն։

24.

Գարունն է եկել նախշուն թիւերով,
Նախշուն թիւերը պէսպէս ձևերով,
Գոյն գոյն ծաղիկներ կարմիր ու սպիտակ՝
Վարդ, մեխակ, շուշան անուշ հոտերով։

—

Երկինք ու երկիր քեզ ասնեն, գարուն,
Զի ես քան զամեն եղանակ սիրուն.
Նա անձրև ցօղէ առատ 'ի վերէն,
Դա օրհնել տայ քեզ եկուր հաւերուն։

—

Ոսկի արևը փայլէ քեզ վերէն,
Կենսաբեր հովը փչէ 'ի լերէն.
Ա՛խ ազնիւ գարուն, եղանակ սիրուն,
Արդեօք դու ի՞նչ բաղդ բերիր ինձ տէրէն։

—

Գլխաքարշ երթամ 'ի պարտէզ այգուն,
Ախ ու վախ քաշեմ ես անդ օրն 'ի բուն.
Զի կայ ինձ հանդիստ, ցնծութիւն սրտիս,
Ես վաղ եմ մոռցել՝ զինչ անդորր է քուն։

—

Մեռած, պատանքած գեանին կեանք տուար,
Ցերևթափ ծառին ստուերախիտ արար.
Քեզ թռչնոց երամ հանդէս կանչեցիր,
Ինձ մենակ խղճիս էսպէս մոռացար։

—

Առաջ գնա՛, գարուն, դէպ հիւսիսն 'ի խոր,
Գնա՛ կանանչցո՛ւր դու անդ սար ու ձոր,
Որոց անհամբեր քեզ կան՝ տո՛ւր բարև,
Բ'ուրախ գալստեամբ նոցա զուարճացուր։

—

Կու գաս գալ տարի՝ դու ինձ կու գտնես,
Ո՛չ 'ի մեր այգին և ոչ 'ի պարտէզ.
Այլ անզարդ քնով հողի տակ պառկած,
Գերեզմանաքար մի վրաս կու տեսնես։

Դ.

25.

Դուն էն գլխէն իմաստուն իս, խելքդ յիմարին բաբ մի՛ անի,
Երաշխումբն տեսածի հիդ միզի մէջ հեսաբ մի՛ անի.
Իս խոմ էն գլխէն էրած իմ, նուր մէկանց քաբաբ մի՛ անի,
Թէ վուր, գիդիմ բեզարիլ իս, ուրիշին սաբաբ մի՛ անի։

—

Զը կայ քիզակէս հուքմի հեքիմ՝ դուն Թոստոմի Ջալ, Թաքավուր,
Ասկըդ ասկերումը գովաճ, համ դուն իս գոզալ, Թաքավուր,
Թէ էս անց էլ սուչ ունենամ, գլուխս արա՛ տալ, Թաքավուր,
Մըտիկ արա՛ քու Սաիղծողին՝ նահախ տիղ ղազաբ մի՛ անի։

—

Եարալուն հիքիմն էնդուր գուզէ, դիղ տալու է, ցաւ տալու չէ,
Քանի գուզէ արբաբ ըլի, ղուլըն աղին դաւ տալու չէ,
Դու քու սիրտըն խտակ պահէ՛, եաղի խօսկըն աւտալու չէ.
Աստուծու սէրըն կանչողի պէս դռնեմէդ Ջուզաբ մի՛ անի։

—

Ամեն մարթ չի կանայ խըմի իմ Ջուրըն՝ ուրիշ Ջըրէն է,
Ամեն մարթ չի կարթայ իմ գիրըն՝ ուրիշ գրըէն է,
Բունիաթս աւաղ չիմանաս՝ քարափ է քար ու կրըէն է.
Սէլաւի պէս՝ առանց ցամքիլ, դուն շուտով խարաբ մի՛ անի։

—

Քանի գուզէ քամին տանէ՝ ծովեմէն աւաղ չի պակսի,
Թէ գուզ ըլիմ, Թէ գուզ չըլիմ, մէջլիներուն սաղ չի պակսի.
Թէ կու պակսիմ, քիզ կու պակսիմ՝ աշխարհս մէ մաղ չի պակսի.
Սայեաթ-Նովու գերեզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի։

26.

Դու տեսնէ՞լ ես երկնքումը,
Պայծառ լուսին ծագելիս,
Կամ Թէ կանանչ տերևի մէջ
Կարմիր ծիրան փայլելիս։

—

Դու տեսել ես ծաղկոցումը,
Կարմիր վարդը փըթըթած,
Շուշան, մեխակ ու նունուֆար
Զորս բոլորքը պար բըռնած։

—

Բայց լուսինը խիստ խաւար է,
Հայ աղջկայ առաջին,
Ծիրան, մեխակ ու նունուֆար
Զարժեն նորա մէկ պաչին։

—

Երկու թըշին վարդ են նատել,
Ճերմակ ճակտին մէկ շուշան,
Ժպիտը բերնից ցած չի գալիս,—
Անմեղութեան է նշան։

—

Աչս նա առաւ կարմրելով,
Իր ընկերից դահիրան,
Դրըմդրըմբեցուց փափուկ մատով
Ու սկսեց լեզգինկան։

—

Նազուք մէջքը ծառի նման
Տատանում է գեղեցիկ,
Մէկ թռչում է նա անդուման,
Մէկ գնում է խիստ հեզիկ։

—

Հալվում է խեղճ կտրիճների
Սիրտը նորան տեսնելով,
Ծերը իրան անիծում է,
Որ ծերացաւ խիստ շուտով։

27.

Դուն տեսնում իս, վունց փոխուիլ է
Քաղքի ադաթն ու վարքըն,
Էնդու համա էլ բարկիլ է
Խալխի մէջքըն ու խիլքըն։

—

Եափնջներու քոշերու տիղ
Էկան պալտոն, չէքմէքըն,
Դըրօշկէքով, ֆայտոններով,
Ալքցուիլ ին քուչէքը։

—

Միր բոզբաշի, արտալի տիղ
Կատլէտ, պուդդինգ, սուփիր ին,
Խոնչերու տիղ՝ էրծաթ պոդնուց,
Քիղանի տիղ՝ ստաքնիր ին։

—

Մորթէ գըդակի մագիար
Ֆուրաշկէք ու շլապնիր է,
Միակըլի ու քաթանի տիղ
Պլատնօ ու բատիստի է։

—

Մօդնի կնգայ պորտմանումը
Ալքը էրծաթ օսկիք է,
Միր տըղերանց խաղացածըն
Պըրաֆերանս ու վիստ է։

—

Մոդնի կնգայ բանն ու գուրծն է
Սաղ օր դէս ու դէն ման գալ,
Փողոց, դէպօ, քարվանսարա,
Մաղազիաներ գնալ։

—

Օրէքումը, թէատրումը
Նուր նուր զուքսիր շանց տալը,
Սեձարքումը ճրկճրկալ,
Փըստա, լէգլինկա խաղալ։

—

Թահար թահար դերիէքով
Ըշկապնիրը լքցնում են,
Գիշիր ցերեկ ման են գալի,
Լօտօ, նարդի են խաղում։

—

Ամ կընիկը վրէս կատղել է,
Գընա՛, կօսէ, բի՛ տեհնիմ.
Ինչ բերում իմ, նա չէ հաւնում,
Զիմ գիդի վուր ջուրն ընգնիմ։

—

Ամ քըրքըրուած կընիկը
Իսկի տանը չէ մընում,
Երեխանցս չէ մոիկ անում,
Դիմի դէս ու դէն է կորչում։

—

Վեչերումը, բալերումը,
Դարփա դարփա նատած են,
Խիղճ մարթիքը տարեկուսած,
Աչքը դռանը մընում են։

—

Էսէնց իմ մոդնի կընիկը
Գլուխս ու ղահլէս տանում է,
Դիփ ասում է նա փուղ հա՛ փուղ,
Էսէնց հոքիս հանում է։

—

Զին կըտըվում նրա բերնեմէն
Նըրա պիտի պիտիքը,
Էս տա՛ր ու փոխէ՛, լաւը չէ,
Էն բի՛, կարէ՛ մոդա է։

—

Էսաու համա միր աղջկիրքն էլ
Վունց կար վունց ձև ին սարվում,
Սաղ օր զուքաճ ման ին գալի,
Տան բանիրը չին շինում։

—

Իփ որ կընիկ դառան, պրծան,
Էլ վունչիչի դարդ չունին,
Խիղճ մարթկանց ջանն ին հանում,
Դիփ փուղին ին զօր անում։

—

Էս միր ուսեալ աղջըկիրքը
Սհաթի տասնին զարթում ին,
Զային հազիր խըմում ին
Կաթնով, բուլկով, սուխարով։

—

Էսաու համա միր տըղէրքն էլ
Հազար թունիր ին ուզում,
Վուր կարենան կընիկ պահի
Միր հիմիկուայ քաղքումը։

—

Աղջկերանց գարդեմէն
Հալուել իմ ու մաշուել իմ,
Էլ Ջան չըկայ մեն գալու,
Ծնգներումըս հալ չունիմ։

—

Կրակ է ու դըրուստ դըժուխկ է
Տան մէջ հասած աղջիկը,
Ունիս չունիս նա չէ խաբար,
Նըրա համա գիսի մէկ է։

—

Վուրդի անշնուրք չոլիոռնիր կան,
Վուրդի վուր անբաղդնիրն ին
Գիսիունանքը մարթ ին ճարում,
Ջունքի փուղիր շատ ունին։

—

Բաս հիշա բան գիդիս դուն, կօսէ,
Էրկու աղջիկ պահելը,
Էրկուսին էլ մէ գիշերը
Ջուքին ու փըսակիլը։

—

Թէ վուր կնդան լեքմին պակսի,
Մարթու հոքին կու հանէ,
Մարթը չի տայ, նա կու ճարէ
Միր հիմիկուայ քաղքումը։

—

Միր պատուաւոր քաղքացիքը
Էլ ճար չունին կնգդերանցմէն,
Զին գիդի թէ էլ ինչ անին,
Կամ ինչ հընարք բանեցնին։

—

Լաւ կուլի վուր մեր տղերքը
Գաղքից մէ կուռը քաշուին,
Անապատում, վանքերումը
Ապրին նրանք սրբերու պէս։

—

Դուն տեսնում ես դիպ փոխուիլ է
Գաղքի ազատն ու վարքն,
Ինդու համա էլ բարկիլ է
Խալխի մէջկն ու խիլքն։

Ե.

28.

Եղբարք՝ մի շուրջ ժողովեցէք,
Գաջ Հայոց կերպի կոնծեցէք,
Բաժակներդ դարդկեցէք
Մեր Հայ ազգի կենացը։

—

Հայոց երիտասարդներուն,
. . . . . .
Որոց անկուճն էլ սուրբ է մեզ,
Այս բաժակը նուիրենք։

—

Հայ աղջիկներու կենացը,
Որք միայն . . . կու սիրեն,
Միշտ իրանց մաքուր կու պահեն,
Այս բաժակը դարդկենք։

—

Անոնց, որ մեր սիրուն գրաւումն են,
Մեզ զգօն ճամբով վարումն են,
Որոց կեանքը մեզ օրինակ.
Մի երրեակ «կեցցէ» ասենք։

—

Եղբարց, որք այժմ աւարտել են,
Մեր ուխտի անդամ եղել են,
Որոց ուխտը միշտ սիրում է,
Այս բաժակը նուիրենք.

—

Եղբարց, որք դարդից ազատ են,
Մահուան հանգիստ վայելում են,
«Ողորմի հոգուն» ասելով,
Այս բաժակը նուիրենք։

—

Բայց որ դեռ գինին փայլում է
Ու մեզ իրան մօտ քաշում է,
Բաժակներդ դարդկեցէք,
Բոլոր Հայի կենացը։

29.

Երբ որ հոգից մարդ դարձայ,
Երբ Աստուածանից հարցայ,
Թէ ինչ վիճակ ես ուզում,
Ասի՝ ուսանողութիւն։

—

Աստուած ուզեց զարդարել,
Ինձ դիպայ շորեր կարել,
Ասի՝ էն դաւ կանանց տուր,
Ինձ մի նշանագեստ տուր։

—

Կապուածդի գտակ տուր,
Մէջքէս կապէ՛ հատու սուր,
Մառանումս լաւ զինին
Թող միշտ անպակաս լինի։

—

Իմ սիրելի նազելին
Մնայ ինձ միշտ հաւատարիմ.
Փղշատցի ախոյեան
Տես՝ իմ սուրն է ինձ պաշտպան։

—

Ով չի լսել ուսանող,
Լաւ էր, որ միշտ ճնար հող,
Քանց Աստուծոյ լոյս արևն
Ունայն տեղը վայելէր։

—

Ով չի կոնծել երգելով,
Ընկերաց հետ պաչուելով,
Նա չը գիտէ ցնծութիւն,
Եղուկ սրտին, վայ հոգուն։

—

Ով չի երդուել ընկերաց
Պաշտպան լինել հայրենեաց,
Վերջին արիւնը թափել,
Հայրենիքը պաշտպանել.

—

Անգնից էնպէսն հեռանայ,
Այս աշխարհից վերանայ.
Թող ում ուզէ կարգն ընկնի,
Մեր մէջ նա թող չը մանի։

30.

Ես չեմ ուզում էս թավուր փիս մահուդը,
Ինձ խաբելայ պարոն Խեչո եահուդը,
Մութը տեղը կարեց՝ չիմացայ փուսը,
Պէտք է որ անիծեմ նրա մօր սուդը,
Ասաըծանով երդում կերաւ՝ ասեց սուտը։

—

Որ լաւը տաս՝ քեզ համար բաւ կուլի,
Բոլոր աշխարհի միջումը չաւ կուլի,
Էս տոլի երեսքաշի լաւ կուլի,
Տոլ չունիմ, կոտրվելայ չորս ոտը։

—

Մի ասէք պարոն Բաբին՝ էս ինչ դալ այ,
Որ տուելայ Ազբարին՝ էս ինչ մալ այ,
Կասենաս թէ ներկած բարդանի շալ այ,
Դաշ էլ կըլի, որ մէջը ճլատես խոտը։

—

Խաբար առի՝ ըստուր գինը նէչա՞ այ,
Էս մահուդ չի՝ բալքա մահուդ բէչա այ,
Տեսնողները հէնց իմացան քեչա այ,
Խարաբ ըլնի ըստրայ էլ գաւօղը։

—

Էս մահուդի թարիֆը ես շատ արի,
Տուի գերձակին, լայեազ չարաւ, որ կարի,
Ասեց էս ինչ այ, չի արժի մի փարի,
Լեզուով նամ տուեց, նամ չի առաւ մի տուար:

—

Ունեցած եմ անուամ՝ առաջ էն լաւը տաս,
Ֆռֆռալէն շաւաղ տալէն խաւը տաս,
Ատաառն ու քոքեն, շինքի մաւը տաս,
Խնաթին ու դուկմէն ու մերամուար:

—

Աղբար Աղամն եմ թահրզ կանեմ,
Աղա երեսա քեզ փիանդազ կանեմ,
Թէ որ չի տաս՝ պոլկոՖնիկին արզ կանեմ,
Ընարանից կառնեմ ամեն եկամուար:

Զ.

31.

Զինուորիս երգերը եղբարք լսեցէք,
Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէք:

—

Մէկին ունի մեծ տներ, միւսն գիւղ ունի,
Միայն խեղճ զինուորը ոչինչ բան չունի:

—

Շորերը թանկագին, փորը միշտ քաղցած,
Տուր ձիուն միշտ գարի, ինքդ կեր չոր հաց:

—

Թէ քաջ պատերազմիս կուան մեծ պարգև,
Թէ ոաքդ կորցնես, կասեն մնաս բարև։

—

Ուր գնամ ես մենակ աշխարհքիս վրան,
. . . . . .։

Է.

32.

Էր հեռանաս քո մայրենի աշխարհից,
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
Մեր ամենիս դու մայր էիր գթառատ,
Արդ հեռանաս, մեզ մութ պատէ անփարատ։

—

Քո սուրբ ձեռօք մեր վէրքերը շատ անգամ
Լուանայիր, դեղ դնէիր ամեն ժամ,
Քո մազերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանքն ազգիդ համար էր ագապ։

—

Արդ Հայոց զօրքն Իւրեանց մօրից որբանայ,
Վրաց ազգը քո խնամօք պերճանայ,
Հայաստանը զրկի իւր սուրբ Շուշանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից։

—

Ուր որ երթաս, ուր որ լինիս տիրուհի,
Մեր սիրտ հոգին քեզ հետ տանիս մաքրուհի.

Գնաս բարեաւ մեր լոյս հաւատն քեզ ընկեր.
Աչն ու խաչը քեզ պահապան զօր գիշեր։

—

Ազգդ ու հաւատդ պինդ պահպանէ մէջ վրաց.
Հայ անունդ միտդ պահէ անմոռաց.
Լոյս հաւատիդ հաստատ կացիր յաւիտեան,
Լոյս հաւատդ քեզ միշտ պահէ անսասան։

33.

Էքուց կիրագի է,
Կոկոն քաղելու է.
Կոկոն տանիմ դէգին տամ,
Դէգէն ինձ մէ բլիթ տայ.

—

Բլիթ տանիմ չոբան տամ,
Չոբան ինձ մէ գառը տայ.
Գառը տանիմ Աստուծ տամ,
Աստուծ ինձ մէ ախպէր տայ.

—

Ախպէր, ախպէր, իս քու շուն,
Գոակի ծէրիդ աբրեշում.
Աբրեշում չելի, կաղ ելի,
Սուփրի ծէրին սաղ ելի,

—

Հաւերուն հալվայ կու տանք,
Բաղերուն բակլա կու տանք.

Թուրքի տղին Ջուր կու տանք,
Վուտով կու տանք, շուռ կու տանք։

34.

Էժան տեսայ՝ ընդուր առայ կաղ էծը,
Ծուլ ծուլ էլաւ՝ տուեց մաղալլաղ էծը,
Մոլլի նման լաւ էր ասում հաղ էծը,
Շատ էր քէյֆով, խմել էր արաղ էծը։

—

Էժան առայ՝ ասի տիրոջը խաբեցի,
Զաղուն դրի՝ պոզերիցը կապեցի,
Փախան առաւ՝ բազարները չափեցի,
Գըժվացըրեց ինձ՝ շինեց սարսաղ էծը։

—

Ինձի չունեմ անեղիցը, նեռիցը,
Շատ եմ ծեծել՝ հարցրեցէք փէռիցը,
Արի, չարի, անց չի կացաւ գեռիցը,
Ինձնից ուզեց գէմի'ինան սալ էծը,

—

Դուրս բերեցի սօկիւռոլուղի գզերը,
Վրէս թափեց ղասաբխանի շները,
Փախաւ՝ մտաւ մաթուշկեքանց տները,
Միաքըն ունէր դառնալ ղուռումաղ էծը։

—

Երկու յեռի ոտներիցը գըցեցինք,
Էն երկար ականջներիցը ձըգեցինք,

Ուշունց տուինք՝ անիծեցինք՝ թըքեցինք,
Չէր ամաչում՝ ինձ անում էր լաղ էծը։

—

Ես չ'է տեսել մի էս թավուր օինբաղ,
Պոզեր ունէր՝ որ ամենն էր մի գաղ,
Համ քոսոտ էր, համ զօթուր էր, համ անմաղ,
Ոտներիցը էլէլ էր գաբաղ էծը։

—

Ես չտեսայ սև իծի մըսի համը,
Գ.ժուլթիւնուն ըսկի չթողուց քեամը,
Էնդուր համար թարիֆն արեց Ազբար Ադամը,
Սրախս վըէն դրեց դուզիւն դաղ էծը։

Թ.

35.

Թէ սիրում իս թամաշա,
Պըտիս տեհնի քաղքումը,
Ի՞նչ ին անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը։
Հալե հալէ, հալե հալէ,
Հալե հալէ, էս ին անում քաղքումը.
Հալե հալէ, հալե հալէ, հալե հալէ,
Մարդիկն իրանց բաղչումը։

—

Ծալապատիկ ծառի տակ
Մի լոթիքն ին նստո�,

Ցկծորնիրն ու խելագէք
Իրանց բոլոր մօտ արել։
Հալի հալէ և այլն։

—

Մին մինի կենաց ին խմում
Սեռելոց ու կենդանեաց,
Մին մինի բողաքն ին խրում
Շամփուրներով խորոված։
Հալի հալէ և այլն։

—

Հազար—փէշէն լի գինով
Կըլկըլացնում, խըմում ին,
Տիկը բռնած պինդ ձեռով
Իսկի ասիս՝ թողնում ի՞ն։
Հալի հալէ և այլն։

—

Քաչալ գըլուխ զուռնաչին
Հառալօ է որ փըչում,
Դիմալեպեսօն լըսողի
Ղուշն ու ականջն է տանում։
Հալի հալէ և այլն։

—

Մեր պատուելի քաղքըցու
Աչքը ճակտին է թըռել,
Դամաղին կըպել լեզուն,
Էլ չի ուզում նա լսել։
Հալի հալէ և այլն։

—

Քաղքացու զոգալ քալին
Մարդիցը յետ չէ մընում,
Զեռին առած մինձ կովզին,
Զօռ է տալի կախեթուն։
Հալի հալէ և այլն։

—

Դրըմբացնում է գահիրան
Իրա փափուկ մատներով,
Պար է գալի լեզգինկան
Ազունակի ոտներով։
Հալի հալէ և այլն։

—

Էսաի Կիկոն Զուլօին
Քընաթաթախ զրում է,
Էնդի Վանոն ձալօին
„Էրթի քալին" մըռում է։
Հալի հալէ և այլն։

—

Էս ին անում համաշա
Մարդիկ իրանց բաղչումը.
Թէ սիրում իս թամաշա
Պըտիս ըլի քաղքումը։
Հալի հալէ և այլն։

36.

Թագ փառաց մերոց այր ցանկալի,
Գոհար անգին, գանձ գովելի,

Միշտ 'ի հոգիս սէր քո վառի,
Մեր նախարար Մամիկոնեան՝
Սուր սայրասուր Սմբատ իշխան,
Առիւծ արի, անպարտելի, եկ, եկ, սէր իմ։

—

Յաշխարհ ձենաց ամպ ահագին,
Փայլատակեալ շանթ հրաձին,
Քաջդ Մամիկոն վեհ քո նախկին,
Մեր նախարար Մամիկոնեան և այլն։

—

Հանճար քո սուր տէգ բոցեղէն,
Տապաստ յերկիր արկ զՍուրէն,
Պարսից զօրուն զպետն անօրէն,
Մեծ նախարար Մամիկոնեան և այլն։

—

Միհրան իշխան՝ օձ բնաձին,
Քև ընկալաւ մահ դառնագին.
Դու արագիլ, այս Հայկազին,
Մեծ նախարար Մամիկոնեան և այլն։

—

Քաջազուն հօր դու քաջ ժառանգ,
Որպէս բազէ թև քո երագ,
Հասեր, հարեր դու զՎախտանգ,
Մեծ նախարար Մամիկոնեան և այլն։

37.

Թէ ծխաքարշը ձեռիս
Սենեակումըս նստած եմ,
Քըթիցս ծուխ հանելիս
Կարծումեմ թէ՝ իշխան եմ.
Երբ քամին ծուխըս փըչէ,
Ես պինդ ծիծաղում եմ,
Ասում եմ մեր գործերը
Էսպէս անցաւոր են։

—

Աշնիւ խոտ՝ դու զօրութիւն,
Կեանք ու ուժ ես ինձ տալի,
Ա՛խ կարնայի քեզ գովել,
Ինչքան սիրտըս է տալի.
Ո՛վ երկինք՝ տո՛ւր էս խոտին
Դու արև և անձրև շատ,
Եւ սորա մըշակողին
Օրհնութիւն, կեանք ու բաղդ։

—

Սենակութեան ժամանակ
Դու ինձ լաւ ընկեր ես.
Թէ իմ սիրտը նեղանայ՝
Քեզ կառնեմ ես ձեռըս,
Թանկ ես Թուրքի ծըխախոտ,
Հարուստներու բան ես,
Հոգիս էլ տամ՝ քեզ կառնեմ,
Ու կ'ածեմ գըրպանըս։

—

Ինչքան էլ դատարկ լինի
Փողերիս քըսակը,
Պէտք է անպակաս լինի
Բերնիս ծըխաքարշը։
Ուսանող՝ ա՛ռ ծըխաքարշըդ,
Շուտ կանցնի քու կեանքը,
Ու ծըխելով միտք արա՛,
Ունայն է աշխարհքը։

38.

Թամամ աշխար պըտուտ էկայ՝ չը թողի հաբաշ, նազանի.
Զը տեսայ քու դիդարի պէս՝ դուն դիփուռնին բաշ, նազանի.
Թէ խամ հաքնիս, թէ զար հաքնիս, կուշինիս ղումաշ, նազանի.
Ինդու համա քու տեսնողին, ասում է՝ վա՛շ վա՛շ, նազանի։

—

Դուն պատվական ջավահիր իս, էրնէկ քու առնողին ըլի.
Օվ կու գըթնէ՝ ա՛խ չի քաշի, վա՛յ քու կորցընողին ըլի.
Ափսուս վուր շուտով մեռիլ է, լուսըն քու ծընողին ըլի.
Ապրիլ էր, մէկ էլ էր բերի քիզի պէս նազաշ, նազանի։

—

Դուն էն գըլխէն ջուհարդար իս, վըրէդ զարնըշան է քաշած.
Դատամաղիդ թիլի մէջըն մէ շադա մարջան է քաշած.
Աչկիրըդ օսկէ փիալա՝ չարխեմէն փընջան է քաշած.
Թէրթերուկըդ՝ նիտ ու նաշտար, սուր զալամթըրաշ, նազանի։

—

Էրեսըդ՝ փարսեվար ասիմ՝ նըման է շամս ու զամարին.
Բարակ միչկիդ թիրման շալըն՝ նըման է օսկէ քամարին.

Ղալամքն ձեռին չէ կանգնում, մաթ շինեցիր նաղըշքարին.
Եվ նըստում իս՝ թուքի ղուշ իս, եվ կանգնում իս՝ ռաշ, նազանի։

—

Ես էն Սայեաթ-Նովասին չիմ՝ վուր ավզի վըրայ հիմնանամ.
Աչաք միզնդ ինչ իս կամում՝ սըրտէդ մէջ խաբար իմանամ.
Դուն կըրակ, հաքածըդ կրակ, վո՞ւր մէջ կըրակին դիմանամ.
Հինդու ղալամքարու վըրէն ծածկիլ իս՝ մարմաշ, նազանի։

39.

Թէ Աստուած կու սիրիս՝
Մէկ ականջ արա,
Ինն իս, ինչ իմ քիզ,
Բալքամ ճար իս դուն։

—

Գիշիրըն քուն չունիմ,
Ցերեկըն ղարար,
Սրտումըս միխած իս,
Դարդիս արա՛ ճար։

—

Աչէն արտասունքով
Աչքիրս է լալի,
Ցարըն անց է կենում,
Էլ ձէն չէ տալի։

—

Քու ծուցըն բաղչա է,
Կայ եասամանի,

Վայ թէ հուտ կալնիմ,
Խիղճս էլ տանի։

—

Ճամփէն հիւացիլ է,
Խաբար չէ գալիս,
Եարաբ էդպէս եար կուլիս,
Ինչպէս դուն եար իս։

—

Պատանքս ձեւած է,
Լալով կարիս դուն,
Իմ մահուան օրը
Մօդըս կուզիմ քիզ։

—

Աչքիրդ ընդու է,
Խալդ Եամանի,
Թամամ էս աշխարքին
Բարեբար իս դուն։

Ի.

40.

Ի բիւր ձայնից բնութեան շրքեղ
Թէ երգք թուշին սիրողաբար,
Մատունք կուսին ամենադեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար.
Զունին երբէք ձայն մի սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն։

—

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մենք,
Որ մրրկաւ էինք զատուած.
Բաղդին ամեն ոխ չարանենդ
Ի մի համբոյր ցրուին 'ի բաց.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

—

Երբ ալեոր . . . . . .
Տեսնէ զորդիս իւր քովէ քով.
Սրտին խորունկ վէրքքն դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցողով.
Ընդ աստեղօք և այլն:

—

Մէկտեղ լայինք մենք 'ի հընուտ.
Եկէք դարձեալ յար անբաժան
Խառնենք զարտօսր և ըզխնտուտ,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան:
Ընդ աստեղօք և այլն:

—

Մէկտեղ հոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ.
Զհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն . . . . . դաշտեր:
Ընդ աստեղօք և այլն:

41.

Իմ սրտին աղ ես արել,
Ջիգեարս դաղ ես արել.
Ինձանից հեռացել ես,
Ինձ բեդամաղ ես արել։

—

Դու ես իմ սիրահարը,
Քաշկա տանեմ քու չարը,
Գլխիս տուել չես քարը,
Կիսակենդան ես արել։

—

Շատ մարդկանց ես խաբել,
Սիրոյդ ես եմ կրակուել,
Ինձ հօ թոկով չես կապել,
Ամա դուստաղ ես արել։

—

Սիրելիդ էի՝ ատել ես,
Ատել ես, նախատել ես,
Ջիգեարս կտրատել ես,
Արնում շաղախ ես արել։

—

Ինձ տեսնելիս տուր բարով,
Խորհուրդտ յայտնէ՛ գրով,
Ինձ հօ մորթել չես սրով,
Անսուր մատաղ ես արել։

—

Ես եմ ազիզ աղբերդ,
Ինձնից մի կտրիլ սէրդ,
Երկնից կամար ունքերդ,
Ինձ վերայ թաղ ես արել։

—

Դու միշտ կամեցիր բարիս,
Ուրախանալ մի՛ չարիս.
Էս քրքրուած ջիգեարիս
Քափով արաղ ես արել։

—

Ասա՛ տեսնեմ իմ մեղը,
Հալուելայ սրտիս եղը.
Երկու ծծիդ մէջ տեղը
Բաղչայ ու բաղ ես արել։

—

Համ դուդի ես, համ լաչին,
Ես կարօտ եմ քու պաչին,
Դոստ ու դուշմանի միջին
Ամօթապարտ ես արել։

—

Ուրվաթ արա՛ սիրահար,
Մի՛ չարչարիլ չարաչար.
Ինձ քցել ես քարէքար,
Դրուստ սարսաղ ես արել։

—

Կարօտդ քաշում եմ քու,
Ցեմ կարում ասել ահու.
Կերպարանքդ տեսնելու
Ինձի արքելք ես արել:

—

Բոյըդ սալբ ու չինարի,
Խարաբա սիրաս շահի,
Ինձ դու տար մօդա պահի,
Հերիք է, եաղ ես արել:

—

Դու ես իմ սիրեկանս,
Մի՛ մաշիլ Ջիվան Ջանս.
Երեք տարուայ դուշմանս
Նոր բարեկամ ես արել:

—

Մայիլ եմ դոշիդ խալին,
Անուշ խելք ու քեամալին.
Խղճալի գուրջի օղլին
Կարկտահար ես արել:

—

Համ օրդակ ես, համ ղազ ես,
Դոստի մօտ փիանդազ ես.
Դու Էնքան օյինբազ ես,
Լացս ծիծաղ ես արել:

—

Կանչում եմ մօտ չես գալիս,
Արեան աչօք եմ լալիս,
Աչքերդ լոյս է տալիս,
Նոր շամ չրաղ ես արել:

—

Մինա բոյըդ սուրահի,
Խարաբա սիրաս շահի,
Ինձ էլ տա՛ր մօդա պահի,
Բաւ է, ղրաղ ես արել:

—

Ես քո սիրոյդ, բարեկամ,
Կամենում եմ հոգիս տամ,
Գոռշներդ անուշահամ
Թղթից շարմաղ ես արել:

—

Բոխսախդ բիլուրի պէս
ՇաՖՖաղ է տալիս հուլի պէս,
Դէմքդ բացուած գուլի պէս,
Խալերդ չաղ ես արել:

—

Մատներդ կակղ մում ա,
Դեռ եփուած չի, հում ա.
Ցեսնողն հենց գիտում ա
Ինձ էլ չրաղ ես արել:

—

Այսօր լսեցի հանգդ,
Խիստ տեղին են նշանքդ.
Աննման կերպարանքդ
Նոր զառվարաղ ես արել:

—

Գարդերս ասեմ ո՞ւմը,
Անոյշ ձեր կեր ու խումը.
Ծիծեռնակաբերդումը
Էն օրը հաղ ես արել:

—

Ականջ դի՛ր խօսքիս լաւին,
Քեզնից չի կտրիլ դաւին.
Բիչարա Գիւրջի-Նաւին
Մագեամ ախմախ ես արել:

—

42.

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկիլը.
Ուրախութեան սրտի գրգիռը
Ոչ մի բերկրանք չէ ինձ համար:

—

Ինձ համար չէ կենաց բաղդը,
Ինձ համար չէ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսի աչքերը,
Նոցա արցունք չեն ինձ համար:

—

Ինձ համար չէ փայլուն լուսնի,
Անտառ ու սար լուսաւորելը.
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար:

—

Ինձ համար չէ բարեկամաց
Մէկ տեղ սիրով տօն կատարելը,
Զատիկ օրուայ ուրախ ասելը
„Քրիստոս յարեաւ" չէ ինձ համար:

—

Ինձ համար է ծնողաց լացը,
Ինձ համար է աղջկայ տխրիլը,
Գերեզմանիս վրայ արտասուիլը
Բարեկամաց է ինձ համար։

—

Բայց ինձ համար կուգայ ժամը,
Կերթամ թշնամեաց պատերազմը,
Եւ մահառիթ սպանիչ գնդակը
Անդ պատրաստած է ինձ համար։

43.

Ինձ ու իմ սիրեկան եարին մէ տարի բերած գիդենաք,
Ախ քաշելէն սրրտիս մէջըն արունըն մերած գիդենաք.
Դիշիր ցերեկ եարի խաթրու ջիգարըս էրած գիդենաք,
Աչկըս թաց, բերանս ցամաք, լիզուս հիդ քերած գիդենաք։

—

Սիրտըս փուրումըս թուլացաւ անգալներու զախ անելէն,
Ուշկ ու միտկըս խառնըվեցաւ խուռըն խուռն խաղ հանելէն,
Աչկեմէս ջուհարըն գընաց՝ եարէն կարօտ՝ ախ անելէն,
Էլ ապրելու ումիկ չունիմ, իմ օրըս կերած գիդենաք։

—

Էրած խորված ման իմ դալի, մէ տիղ չըկայ մար ունենամ,
Լեզվով չիմ կանացի ասի, թէգուզ խօսկըս փարդ ունենամ,
Ափսուսալու հազար ափսուս՝ իս էնղադա դարդ ունենամ.
Էշխէն ուշկ ու միտկըս կապած, ինձ ջըրի տարած գիդենաք։

—

Սիրտըս փուրումըս սրքուր է, ալ աչկիրըս լայ է անում,

Ցովը նընգած ամբի նըման դօշս ու եախէս թաց է անում,
Քանի վուր մըհլամ իմ դընում, դուգունս էլ խիստ բաց է անում,
Հալվեցայ արնաքամելի՝ եարէս հիդ արած գիդենաք։

—

Օվ տեանում է, էս է ասում. "վա՛յ քու դարին Սայեաթ-Նովա,
"Համաշա քիզ պիտինք տեանի՝ աչկըդ արին, Սայեաթ-Նովա,
"Ինչո՞վ չէլաւ, չըռաստ էկար մէ լաւ եարին, Սայեաթ-Նովա."
Ու մըրըլա էրազի պէս գընաց՝ ծառըս չը խերած գիդենաք։

44.

ՍԱՅԵԱԹ—ՆՈՎԷՆ

Ի՞նչ կանիմ հեքիմըն, ի՞նչ կանիմ ջարէն,
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ,
Էրում է մըհլամըն, չէ լաՁնում եարէն՝
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ։

ՍԻՐԵԿԱՆՆ

Ասայ թէ. "Հիռացի՛ գըլխէմէս գընա՛,
"Քու ասածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ.
"Էտ քու արարմունքսըն քիզի չի մընայ,
"Քու ասածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ, ուրիշ տիղ, ամանն
ուրիշ տիղ։

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԷՆ

Ասի թէ. "Էշխեմէդ չիմ հանդչում տանըս,
"Զեռնիրըս թըլայաւ՝ չէ շինում բանըս,
"Էրվեցաւ ջիգարըս, մաշվեցաւ ջանըս՝
"Քու տըվածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ։

ՍԻՐԵԿԱՆՆ

Ասաց «իմ դիղեմէն քիզ չըկայ չարա,
«Գընա՛ թէ խիլք ունիս՝ գըլխիդ ճար արա՛,
«Թէ չէ անիլ կուտամ քիզ փարա փարա.
«Քու տըվածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ։»

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԷՆ

Ես բըլբուլ իմ, վարթըս մընաց խարումըն,
Կըրակ դըրիր սըրտիս խուցի եարումըն.
Վունց գըրանքումը կայ, վունց դաւթարումըն՝
Քու տըվածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ։

ՍԻՐԵԿԱՆՆ

Ասաց թէ. «Քի զարար՝ շինեցիր շահըդ.
«Կըտրեցիր աղաբըդ, կըտրեցիր ահըդ.
«Մի վիթի արունըդ, մի՛ շանց տայ մահըդ,
«Քու ասածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ։»

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԷՆ

Ասի թէ. «Մազիրըդ սուրմա իս անում.
«Հենց գիդիս չիմ գիդի, եար, չիմ իմանում,
«Սէրըդ ինձ մահ դառաւ՝ էլ չիմ դիմանում,
«Քու տըվածըն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ։»

ՍԻՐԵԿԱՆՆ

Թաքավուրի Թագի լայիղ քարըն իմ,
Շիրինի պէս Փահրադի դիդարըն իմ,
Ես էն գըլխէն Սայեաթ—Նովու եարըն իմ,
Քու ասածըն ուրիշ տիղ է, ուրիշ տիղ։

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԷՆ

Հիդրս խօսի, մի՛ կենայ խրոովի պէս,
Տալդա տրվիր, գեմիս տարար ծովի պէս,
Կու մեռնիմ, չիս տեսնի Սայեաթ—Նովի պէս.
Քու տրվածդն ուրիշ դիղ է, ուրիշ դիղ։ Ամա՜ն,
ուրիշ դիղ։

45.

—Ինչու՞ կուլաս դուն, գառնիկ։
"Խիստ ծեծ կերայ ես, մարիկ"։
—Ո՞վ ծեծեց քեզ գառնիկ։
"Մէկ ծեր կախարդ մը կընիկ։
—Ընտո՞ր ծեծեց քեզ, գառնիկ։
"Ցառին տակը իս, մարիկ"։
—Ինչո՞վ ծեծեց քեզ, գառնիկ։
"Մեծ պասթոնով մը, մարիկ"։
—Ո՞ր տեղդ զարկեց քեզ, գառնիկ։
"Ուսըներուս, իմ մարիկ"։
—Ի՞նչպէս լացիր դուն, գառնիկ։
"Մէ՛, մէ՛, մէ՛, մէ՛, իմ մարիկ"։

46.

ԱՂԱԽԻՆՆ

Ինչ ես նստել մունջ քու բանին,
Վ.ԷՐ կաց, դուս էկ, թէ ի՞նչ խօսին.

Խեղճիկ, էս էր քո արժանին,
Որ դու ընիս կին թաթարին.
Դու պէտք էիր ընիլ տիկին,
Տիկնաց տիկին . . . . իշխանին,
Եւ ոչ էսպէս անօրինին
Ձեռը կապած ընիս գերին:

ԴՈՒՍՏՐՆ

Ի՞նչ ես ասում ճարըդ կտրած,
Ձեմ հասկանում ասա՛ դու բաց:

ԱՂԱԽԻՆՆ

Էսօր աստղդ թըռաւ, կորաւ,
Լուս արևըդ խաւարեցաւ.
Վա՛յ իմ գլխիս, վա՛յ քեզ Շուշան.
Գերի գնացիր թաթարըստան.
Լոյս հաւատքըդ պէտք է մոռնաս,
Մահմետի կրօնքին դառնաս:

ԴՈՒՍՏՐՆ

Լեղուդ սեւնայ, բերանդ չորնայ,
Ի՞նչ համբաւ է, ասա ի՞նչ կայ:

ԱՂԱԽԻՆՆ

. . . . Իշխանըն քեզ տուել է,
Թաթար խանին, հետն տանէ:

ԴՈՒՍՏՐՆ

Աղջի քոցերք, եկէք, եկէք,
Կորած գլխիս դառը լացէք,

Սև էր դառել օր ծննդեան,
Որ ես ծնայ թշուառական։
Մէրիկ, վէր կաց գ'իրեզմանէդ,
Շամբաւ լոսէ աղջկանէդ։
Իմ սև բաղդը էնպէս արեց,
Թաթարստան մինակ քըշեց.
Անգութ օրհաս հոգին հանէ,
Գեսին պատռէ, ինձ ներս տանէ։

ԱՂԱԽԻՆՆ

Աղջիկ պարոն, էս ինչ լաց է,
Աղի արտասունք, դառն կոծ է.
Մենք ամենքս ցուրդ տանենք,
Մեր գլուխը քեզ մատաղ կանենք.
Ուր որ երթաս հետըդ կըգանք,
Ձեր աղ ու հացն կը մոռանանք.
Մենք ոնց պէտք է տեսնենք աչքով
Ցեղէս մենակ գընաս լալով.
Աչքերդ սրբէ և հանդարտուիր,
Հերիք եկաւ քեզ, մի՛ ծեծուիր։

ՊԱՌԱԻՆ

Վաթսուն տարի եմ ես ձեր դրան,
Հէրըդ, պապերդ են իմ կըռան
Ծնած, սնած, իշխան եղած,
Էնպէս մին ցաւ ես չեմ տեսած։
Ականջըդ բաց, լսէ՛ խրատիս,
Մըտիդ ձգես էս պառաւիս.
Ուր որ գընաս, ինչ տեղ ընիս,

Հատատատ մինաս լոյս հաւատոյ.
. . . . . .
. . . . . .
Եհ, տէր ընդ քեզ, զնաս բարեւ,
Քրիստոս պահէ քո լոյս արև:

Լ.

47.

Լուսացաւ, լուսացաւ.
Լուսն է բարին,
Ցիսն է ծառին,
Հաւն է թառին:
Ցոյլ մարդկանց քունն է տարի.
Աշխատաւորը վեր կաց բանի:
Երկնքի դռները բաց էր,
Ոսկէ աթոռը դրած էր,
Քրիստոս վրէն նստած էր,
Լուսաւորիչը կանգնած էր,
Ոսկէ գրիչը բռնած էր,
Մեծ ու պստիկ գրում էր,
Մեղաւորներն լալում էին,
Արդարներն խաղում էին:

48.

Լքցրէք թաւերը, խմէնք լաւ գինին,
Թող ինքը բաղդը մեր բանը շինի.

Մեզ նման քէֆով ոչ ոք կեանք չունի,
Միշտ ազատ, ուրախ խմում ենք գինի։
Եթէ մեզանից մէկը դարդոտուի,
Մենք շուտով նրան տալիս ենք գինի.
Գինի, գինի, տալիս ենք գինի։
Գինի, գինի, տալիս ենք գինի։

—

Լքցրէք թասերը, միասին խմենք
Ձեր սիրեկների անգին կենացը,
Թող միշտ մեզ սիրեն, մենք նրանց սիրենք,
Եղ է ամենքի սրտի ուզածը։
Իսկ եթէ մէկը մեզ կը խաբի,
Խաբուածին կտանք լիք թասով գինի.
Գինի, գինի, լիք թասով գինի։
Գինի, գինի, լիք թասով գինի։

49.

Լքցրէք եղբարք ձեր բաժակները
Եւ քաջ պարպեցէք.
Այսպէս գինի բոլոր աշխարհքումը
Դուք գնելու չէք։

—

Ոչ Թուրքի է այս և ոչ Մաճառի,
Ոչ Ֆրանսիայի.
Թող ուրիշն օտար գինի խմէ,
Մերն է հրաշալի։

—

Համպայն գինին—կանացի գինի է,
Այդ մեր գինին չէ.
Խմել, կոնծել թէ և կարելի է,
Բայց սիրելու չէ։

—

Խրիմի գինին լաւ գուլաճ գինի է,
Բայց այս էլ այն չէ.
Ճաշից հետ խմել կարելի է,
Բայց երգելու չէ։

—

Կեխեթու գինին պատուական գինի է,
Թէև Հայոց չէ.
Բայց ափսոս որ . . . .
Նոյեան տնկած չէ։

—

Երասխի մօտ՝ այն տեղ է մեր գինին,
Օրհնեալ է Երասխ.
Երասխի մօտ ամէնքն են գեղեցիկ,
Ամէնքն են ուրախ։

—

Այդ գինին պարգևից մեզ Աստուած,
Ու դրախտից հանեց.
Երբ . . . Նոն աշխատանքից մաշուած,
Նորան աղաչեց։

—

Նոն իմաստուն մարդ եղած պիտի լինի,
Որ այդպէս ճարտար
Նա ճմլեց, քամեց, խմեց մեր գինին
Ու շինեց տակառ։

—

Ուրեմն եղբարք, բաժակն լցրած է,
Ջամբեցէք անվախ.
Թէ լանք որ մէկը շատ ախրած է,
Նորան զինի կ'տանք:

Խ.

50.

Խմել երգեց Անակրէօն,
Խմել երգեց Հորաց.
Խմի՛ր ուրեմն ուսանող.
Ըստ կարգին նախնեաց:

—

Խմի՛ր վեց շիշը շաբաթը,
Կասէ Հիպպոկրատ.
Այս իմաստուն բժշկից
Ա՛ռ քեզ խրատ:

} 2 անգամ

—

Սոկրատէս փիլիսոփան,
Երբ կինը գոռար,
Գինւոյ չաստուած Բաքոսին
Շուտ ուխտի կերթար: Խմի՛ր և այլն:

—

Զուր խրմող Դիոգինէն
Տես թէ ինչ արաւ.
Իր բնակուելու համար
Մի տակառ ընտրաւ: Խմի՛ր և այլն:

—

Թէ նախնի գարերումը
Գինին գոված է,
Մինթէ մեր սուրբ գրքերումը
Այդ արգելած է։ Խմի՛ր և այլն։

Ծ.

51.

Ծիծեռնակ, ծիծեռնակ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպ ի ո՞ւր, ինձ ասա,
Թռչում ես այդպէս արագ։

—

Ա՛խ, թռիր, ծիծեռնակ,
Ծընած տեղս Աշտարակ.
Անդ շինիր քո բունը
Հայրենի կըտուրի տակ։

—

Անդ հեռու ալեոր
Հայը ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդուն
Սպասումէ օրէ օր։

—

Երբ տեսնես դու նորա
Ինձնից շատ բարև արա՛,
Ասա՛, թող նըստի լայ
Իւր անբաղդ որդու վըրայ։

—

Դու պատմէ թէ ինչպէս
Աստ անտէր ու խեղճեմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կեանքս մաշուել, եղել կէս։

—

Ինձ համար ցերեկը
Մութ է շրջում արեգը,
Գիշերը թաց աչքիս,
Քունը մօտ չի գալիս։

—

Ասիր որ չի բացուած
Թառամեցայ միացած,
Ես ծաղիկ գեղեցիկ՝
Հայրենի հողից զրկած։

—

Դէհ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացիր, թռիր արագ
Դէպ ի Հայոց երկիրը.
Ծնած տեղս — Աշտարակ։

Կ.

52.

Կռունկ, ուստի կուգաս, ծառայեմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս.
Մի վազեր երամիդ՝ շուտով կը հասնիս,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

—

Թողեր եմ ու եկեր իմ մէջերս ու այգիս,
Քանի որ ախ կանեմ կու քաղուի հոգիս.
Կռունկ, պահ մի կացիր, ձայնիկդ 'ի հոգիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

—

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ։
Ձայնիկդ անուշ կու գայ քան գէջի տօլապ.
Կռունկ, Պաղտատ ինչնուս կամ Թէ 'ի Հալապ,
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

—

Սրտերնիս կամեցաւ, ելանք գընացանք,
Այս սուտ աստընուորիս դերտերն իմացանք,
Աղուհացկեր մարդկանց կարօտ մընացանք.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

—

Աստընուորիս բաներն կամաց կամաց է.
Մի թէ Աստուած լսէ, դռնակն բացցէ.
Ղարիպին սիրտն է սուգ, աչերն 'ի լաց է.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

—

Աստուած, քեզնէ խնդրեմ մուրվաթ ու քէրէմ.
Ղարիպին սիրան է խաց, ճիկերն է վէրէմ.
Կերած հացն լեզի ու ջուրն է հարամ.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

—

Ոչ գլուր օրն գիտեմ, ոչ գկիրակին,
Զարկած է գլխս շամփուրն բռնած կրակին,
Այրիս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

—

Պաղտատու կուգաս, կերթաս 'ի սէհրատ,
Թղթիկ մի գրեմ, տամ քեզ ամանաթ.
Աստուած թող վկայ լինի քո վըրաղ.
Տարեալ հասուցես զայդ իմ սիրելեաց։

—

Գրեր եմ մէջ թղթիս, թէ հոս մնացի.
Օրիկ մի օրեր գաչերս չը բացի.
Սիրելիք, ձեզանէ կարօտ մնացի.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս։

—

Աշունն է մօտեցեր, գնալու ես թէտպիր.
Երամ ես ժողովեր հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր.
Կռունկ, մեր աշխարհէն գնա՛, հեռացիր։

53.

Կտուր կտուր ամբ էր գալի բացըը սարիցն,
Մէկ փնչատուած գիր ըստացայ իս իմ եարիցն։

Գիր գրողը լաւ չէր գըրի գալմի ծէրիցն,
Սիրեկնի մօդ միանք յիդ գրինք մազի ծէրիցն։

—

Բալքա նա միզ մօդ գալ գուզէ իրա սէրիցն,
Էրաճ սրտին մհլամ գնէ իրա գիղիցն.
Սրտումն գուգուն է բանում եար քո սէրիցն,
Էլ ապրելու ումիկ չունիմ չտեսնելուցն։

—

Գիշեր ցերեկ ջուր է թափում ալ աչքերիցն,
Դոշս ու եախէս թաց է անում շատ լաց ըլելիցն.
Եար, մի՛ թողնի, մի՛ մոռանայ փրկէ մահիցն,
Քիչ ջուր ածա՛, եարէս հովցրա՛ւ, հանէ՛ կրակիցն։

—

Յիդս խօսի, ձէնըդ լսիմ աղունակիցն,
Բալքա իմ սիրտը հովանայ էսքան կրակիցն.
Եշխեմէդ ջունուն իմ դառի, եա՛ր, քու սէրիցն,
Խիլքս ինձմէն հիռացիլ է քիզ չ՝տեսնելուցն։

—

Լաւ փիքր արա՛, ի՞նչ կու տանիս փուչ աշխարիցն,
Վիրչն մահ է, տէրն թափէ շատ միղքերիցն.
Խիղճ գիգոլին, իս ի՞նչ անիմ էսքան դարդիցն,
Մաջալ չունիմ, հոքիս հանիմ իրա տիղիցն։

54.

Կրամբամբուլին էս էն օղին է,
Որ մեզի քաջ ծանօթ է.

Որոյ համը չի տեսնելը,
Ուսանողին ամօթ է.
Բայց հանապազ, իմ սիրելի,
Մենք կոնծում ենք կրամբամբուլի,
Կրամբամբիմբամբուլի, կրամբամբուլի:

—

Հայրս անդադար ինձ գրում է՝
"Որդի Ջան՝ շուտ աւարտէ՛.
Ժամանակդ արագ անցնում է,
Տես, գրերդ լաւ սերտէ.„
Բայց Նորա պարոն որդին,
Կոնծում է կրամբամբուլին, կրամբիմբամբուլի,
կրամբամբուլի:

—

Թէ դարդն ու հոգսը ինձ նեղում է,
Թէ իմ քէֆը տեղը չէ;
Թէ աղջիկը ինձ խաբում է
Ու էլ հաւատարիմ չէ.
Կասեմ՝ "աղջիկ, իմ նազելի,
Քու տեղ կ'սիրեմ կրամբամբուլի, կրամբիմ-
բամբուլի, կրամբամբուլի:

—

Թէ լերդս ու թոքը իմ մաշուել է,
Գլուխս էլ սաստիկ ցաւում է,
Թէ որ խմելն ու քէֆ անելը
Բըժիշկն ինձ արգելում է.
Բայց ինչ ցաւ կուզէ ըլի,
Ես կ'կոնծեմ կրամբամբուլի, կրամբիմբամ-
բուլի, կրամբամբուլի:

—

Երբ մայրս ինձ մի հարս ճարել է,
Ասում է, որ պսակուիմ,
Եւ պարաքն ու կարգն ինձ ստիպել է,
Որ ես ճաշ ու քէֆ սարքեմ.
Ես ճաշի տեղ, իմ սիրելի,
Կառնում առատ կրամբամբուլի, կրաբիմբամ-
բուլի, կրամբամբուլի։

—

Բայց երբ կուգայ կեանքիս վերջը,
Մահն էլ առաջիս տեսնեմ,
Օղին կածեմ բաժակիս մէջը,
Հոգեհանիս էլ կ'ասեմ.
"Վերջին անգամ, իմ պատուելի,
Եկ տուաքացնենք կրամբամբուլի, կրամբիմբամ-
բուլի, կրամբամբուլի։

55.

Կալկաթա քաղաք մեաս բարով,
Մեր սիրեկաններ մեաք բարով։
Տրա լա լա լա տրա լա լա լա,
Տրա լա լա լա տրա լա լա լա։

—

Էստեղ շատ անգամ քէֆ ենք արել,
Շատ փող, շատ ապրանք ենք բաժանել։
Տրա լա և այլն։

—

Մէկ էլ ոչ գիտէ երբ կտեսնենք,
Մեր սիրեկներին կ'համբուրենք։ Տրա լա և այլն։

—

Թէ մէկ էլ յետ գանք, միշտ կը ճնանք,
Մեծ հարստութիւն մենք կունենանք։ Տրա լա և այլն։

—

Քեզ շատ կ'յիշենք Մաղրասումը,
Քեզ չենք մոռանալ էն երկրումը։ Տրա լա և այլն։

---

56. (*)

Կեցցես դու Շապուհ, կեցցես մեր արքայ,
Քեզ փառք յաղթութեան ամեն տեղ միշտ կար.
Քեզնից դողում էր ողջ Յունաստանը,
Ոտի տակ ընկաւ այսօր Քուշանը.
Դէ՛, քաջ Պարս եղբարք կեցցէ՛ կանչեցէ՛ք,
Մեր վեհ մազդ եզանց փառքն աւելցրէ՛ք։
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ
Շապուհ և իւր զօրութիւն։

—

Անմահ Որմիզդը քեզ մեզ պարգևեց,
Քո ահից սուրը նա ինքը սրբեց,
Փշրել թշնամեաց ջնջել օտար դէն,
Աշխարհս բոլոր առնել Պարսկաստեն.

---

*) Այս երգը վերաբերվում է պարսից Շապուհ արքային և երգուեցաւ Մոզերի բերանով «Վարդան Մամիկոնեան» պիեսայի մէջ։

Դու քո քաջութեամբ անմահ դից հաւասար
Տուեր մեզ խրախոյս յաղթել քաջաբար։
Կեցցէ՛ և այլն։

—

Եւ սէրն Արշակունեաց Անոյշ բերդի մէջ
Պէտք է փշանայ դառն վշտի մէջ.
Յաղթութեան դռները անմահից շնորհօք
Բվում են առջևդ վեհապանծ փառօք.
Դէ՛, քաջ զօրու նղբարք կեցցէ՛ կանչեցէք.
Մեր արքայն Շապուհ դիւցազանց ասէք։
Կեցցէ՛ և այլն։

Հ.

57.

Հայոց աղջիկներ՝ ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք գալիս՝ ասում եմ ես ա՛խ.
Հալվում եմ, հալվում օտարութեան մէջ,
Ա՛խ, սիրտըս խորվում, ցաւիս չկայ վերջ։

—

Երբ կարմիր գինին բաժակումն ածած
Սեղանիս վրայ առաջս է դրած,
Աչքս ակամայ վրան եմ ձըգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում։

—

Տեսնում եմ և ա՛խ, միտքս է մոլորվում,
Դառն արտասունքով աչքս պղտորվում,

Կարծում եմ բոլոր աշխարհն մթնեց,
Արևն էլ խաւրեց, էնդուր որ տխրեց։

—

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ ե՞րբ կը տեսնեմ.
Էն սև սև աչքերն՝ սև ունքով պատած,
Կարծես՝ երկնային զալամով քաշած։

—

Էն սև սև աչերն, որ շատին սպանեց,
Բայց էլի շատին դժոխքից հանեց.
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,
Առանց կրակի էրուած, խորոված։

—

Էլ ե՞րբ կըտեսնեմ ես ձեզ մանն գալիս,
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս.
Ինչ տեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբ որ ձեր կարմիր թշերը տեսնում։

—

Բլբուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թռչում է, թռչում, ամպերում կորչում
Եւ իր Արարչի տեսածն ասելիս
Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ է կանչում։

—

Հայոց աղջիկներ՝ ի՞նչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բէզամաղ կանեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես։

—

. . . . .
. . . . .

Ձեր սէրն է միայն սրտումս պահած,
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
Ձեր սէրը միայն էս կեանքը մաշուած
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի։

58.

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատած են ինձանից.
Թառամում եմ ես այս օտար երկրումը,
Մենակ բըսած ծաղկի նման դաշտումը։
Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգած գարուն, ամառ դարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երեկը կրկնըվում է միշտ այսօր։
Ասպարիզիս նեղ է ճամփան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ,
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի,
„Դա, ասում են, իր կեանքումը գարդ չունի„։
Ես գարդ ունիմ, գարդըս մեծ է ու պէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես։
Երբ ես մըտայ անհիւրընկալ այս աշխարհ,
Քանի՞ ըսպէ բաղդը ժպտաց ինձ պայծառ.
„Հա, ասացի, գարձել է իմ անիւը.
Ղըրացել է իմ վատ բաղդի չար թիւը„։
Ցանկարծ վըշեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցուց վարդ, մանուշակ մայիսին։

Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը։
Ա՛խ, մօտեցիր օրհասական օր մահուան,
Բեր քու հետը սև հող ու նեղ գերեզման.
Թող սառ լինի իմ նոր տանը յատակը,
Ցանը քարէ վրաս ծածկած վերմակը.
Բայց ա՛խ՝ երբ որ կանցնի ամիս ու տարի
Կը մամռոտի գերեզմանը այն քարի,
Հետքը անգամ չի մնալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ—կը կորչին։
Բայց կուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ դարէ դար մընար ամուր, անկործան. . .
Ես երգեցի երգ ոլորուն ու անուշ,
Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քնքուշ.
Մի՞թէ այնքան անգութ կլինի Լեռտա գետ,
Որ անունս անգամ կանէ նա անհետ,

59.

Հաւար Զուլօ, մաղաթ Զուլօ,
Սանի գեօրդում, եանդըմ Զուլօ։
(Այս երկու տողը պէտք է կրկնել
հետևեալ ամէն մէկ տան վերջին։)

—

Ես Զուլօն եմ Մաստարեցի,
Հինգ օր արի՛ մեր տուն կեցի՛,
Դէմ աղօթքան եկեղեցի։

—

Արևն ելաւ կամար կամար,
Զուլօն կապեց ոսկէ քամար,
Քեզի բերեմ Ջանիս համար։

—

Արևն ընկաւ խամուր բերդին,
Քո սէրն ընկաւ մէջ իմ լերդին,
Ես քեզ սիրեմ, թող զիս քերթին։

—

Տան քով անցայ ճրագն էր վառ,
Դու նման ես զօզանի գառ,
Որբևերցի՛, արի՛ զիս ա՛ռ։

—

Զաղցի բոլոր զմէն ուռ էր,
Աշխարհն ասէր, Զուլօն ծուռ էր,
Մէջ իմ սրտին լ՚ալ ու դուրը էր։

—

Թունտիր վառեր՝ եղեր է մուխ,
Կապել փուշին՝ թորգելայ պուխ,
Ունքերդ կամար, աչքերդ թուխ։

—

Օր մը աղէկ, օր մը վատ էր,
Կանաչ գլուխ չօլի բադ էր,
Էլի խօսքով զիս կու ատէր։

—

Տան քով անցայ՝ թափ քելեցի,
Լանգով զարկի, զերդիկ բացի,
Եարս տուն չէր, նստայ՝ լացի։

—

Թառ խորոտիկ ասլի զաղա՛,
Քո դարդ մէջ իմ սրտին շատ ա,
Քո ծոցն ընձի նաշխուն օղա։

—

Մեր տան յետև արտ մի եօնջա,
Թխեմ գաթա, ճամբեմ խօնչա,
Առնեմ Զուլօն, շրջեմ գեանջա։

—

Տատ խորոտիկ անմահութիւն,
Սերելիս, մի՛ ըներ վատութիւն,
Թորգեմ, երթամ զարիբութիւն։

—

Դու կաննել ես դէմ ամրոցին,
Զուխտակ շամամ մէջ քո ծոցին,
Դու կ՚խաղաս խետ վզնոցին։

—

Մեր տան յետև Զուխտ մ՚գերան,
Բոլոր երես, պստիկ բերան,
Քո սիրողիդ դռներ վերան։

—

Մեր տան յետև արտ մ՚գարի,
Երթանք, քաղենք, տանք խիարի,
Ճամբեմ Զուլօի դիարի։

—

Պաղ Զուր պրծել՝ կու գայ սարէն,
Դեռ չի սաղցեր սրտիդ եարէն,
Ես ի՞նչ անեմ զիմ քեօր սիրթարէն։

—

Զուրն է պրծել՝ կուգայ սարէն,
Կու գըլգըլայ մարմար քարէն,
Եարն է դարձել իր իղրարէն։

—

Զաֆար Աղի Նշխուն օղէն,
Նոր եմ ելել Զուլօի մօտէն,
Զեմ կշտացել անոյշ հոտէն։

—

Նշխուն օղա, չինի քեասա,
Նանէին գնա՛, թաքուն ասա՛,
Էսօր ես Զուլօին թահնայ տեսայ։

—

Դու ելել ես կերթաս 'ի բեը,
Ոչ բերն ըլի, ոչ բերատէը,
Տ'օ, պատիկ հարս, նոր սիրոյ տէր։

—

Դու ելեր ես, կերթաս իգին,
Դու ու քու Ջուխտակ տեգեր կին,
Որն տեսնի՝ ելնի հոգին։

—

Քո մօր անուն կըսեն Սառայ,
Ես քո սիրոյդ կրակ վառայ,
Դամաթ չելաւ՝ քեզիկ առայ։

—

Դու կաններեր ես դարգեահի դուռ,
Սէջքդ նմանի խանչալի բուռ,
Զիս ըրեցիր սավդա ու ծուռ։

—

Ամպերն եղեր բութա բութա,
Զուլօն կապեր բալաք փութա,
Ես քեզ սիրեմ, թող ըսեն սուտ ա։

—

Տնէն ելար հալա հուլա,
Ծիծերդ նմանի բամբկի քուլա,
Աչկունքս տեսան, սիրտս կուլայ,

—

Առաւօտուն բարի լուսուն,
Քո կոճկներդ հարիւր յիսուն,
Ես զուրբան եմ էդ քո տեսուն։

—

Զանունդ գիտեմ, ախ, չեմ ասի,
Մանիշակ խառնուեր հետ քո վարսի,
Զեռս տարայ ծոցդ՝ խոցերդ հասի։

—

Զանունդ եմ ասեր զանազան,
Իսկի չի կայ քեզի նման,
Ծամերդ էլ ճիւղ ճիւղ ըէյհան։

—

Դու կու քելես եանա եանա,
Մէրկանդ ըսի՝ դուռը բանայ,
Զիրար սիրենք, մարդ չիմանայ։

—

Ամեր տուն ձեր տուն մէկ դառապով,
Ելնես մտնես կանաչ կապով.
Զիրար սիրենք Աստուածն ապով։

—

Դու ելեր ես՝ կերթաս Կանգառ,
Ցամերդ ուսերդ էլէ խանգար,
Ես քեզ սիրեմ՝ թող զարկեն չանկալ։

—

Ամեր տուն ձեր տուն դիմաց դիմաց,
Հար ելբ աչօք ընեմ իմաց,
Մեր երեսի հայէն գնաց։

—

Աշխարհ ալամ քեզ կու գովեն,
Օր մ'չելար սէլի հովէն,
Ցամերդ քաշած վանայ ծովէն։

—

Ամեր տան ետև արտ մ'մասուր,
Զուլօն առնեմ՝ մտնեմ մուր,
Զուլօն սիրեմ, թորգեմ սկեսուր։

—

Հելէլ վելէլ Մսրու գոմէշ,
Իմ ձեռ թալեմ գեալաշի փէշ,
Զուլօն եղնի ընձի փէշքէշ։

—

Ամեր տան յետև արտ մ'պնդուկ,
Ձեր տան յետև արտ մ'պնդուկ,
Զուլօն առնեմ, մտնեմ սնդուկ։

—

Գամին եկաւ էրան էրան,
Գնաց հասաւ Մշու բերան,
Մշու հաւեր թեւաւորան,
Գեալաշի տուն սեւաւորան։

—

Մեր տան եռև քառաուն կարաս,
Քառաուն կարսի զինին էր խաս,
Ոսկէ գիւգիւմ արծըթէ թաս,
Ամէն թասին պաղիկ մ'տաս։

—

Բուխարիկն ելայ, ցախ էրի,
Եաթունջխս պատէն կախ էրի,
Մտայ ծոցդ, շիլթախ էրի,
Պաղիկդ առայ, օխայ էրի։

—

Զուխտ մ'գուլթան դաշտ կու բանի,
Զուլօ խաթուն խաց կու տանի,
Մին կու քելէ, մին կու կայնի,
Աչքով, ունքով մարդ կու ապանի։

—

Մեր տուն ձեր տուն մօտիկ մօտիկ,
Դու կապել ես կարմիր գօտիկ,
Երթանք՝ քաղենք կանաչ խոտիկ,
Տեսնունք՝ վի՞ր եարն է խորօտիկ։

—

Եկէք՝ երթանք գարի պոկենք,
Հայլի բերենք՝ գլուխ կոկենք,
Երթանք Զուլօի դրանը չոքենք,
Բալքեամ Զուլօն ընդեանց պոկենք։

—

Մեր տուն ձեր տուն երես երես,
Ապսպարեմ հայլիս բերես,

Արարիչ Աստուածդ սիրես,
Զուլֆիս անուն չ'աւերես։

—

Ամեր տան յետև տուն մի կարաս,
Զեր տան յետև տուն մի կարաս,
Ամէն կարսի գինին էր խաս,
Ոսկէ գիւգիւմ արծըթէ թաս,
Ամէն թասին պաղ մը կուտաս։

60.

Հռոմիմիս սաղ ունենամ,
Մէկ էսթավուր բաղ ունենամ,
Մէ լուծ եզն էլ չաղ ունենամ.
Քէպ է ու քէպ է.
Հռոմիման էլ միշտ թանէ սպաս
Էպէ ու էպէ.
Քէպ է ու քէպ է։

—

Միշտ Հռոմիս ձէնը լսիմ,
Օր ու գիշեր հիդը խօսիմ,
Էն վուխտը շատ խաղեր կօսիմ.
Քէպ է ու քէպ է.
Դուն էլ թանէ սպաս Հռոմիմ
Էպէ ու էպէ.
Քէպ է ու քէպ է։

61.

Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպ 'ի քեզ, հոգւովս անդադար.
Բայց աւա՜ղ այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռվում և. ես։

—

Ա՜խ քո . . . . փոթորկի մէջ է
Եւ որ արշալուսով քո օր կարմրում է.
Թո՛ղ այստեղ չարչարուեմ, անծանօթ կապուած,
Միայն քեզ, Հայրենիք, տեսնեմ . . . :

—

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով
Սրտում շղթաների ձայնը կրելով.
Կարո՞ղ եմ մոռանալ, իմ ազգ հարազատ,
Ա՜խ, կամ ոչնչանալ կամ լինել ազատ։

Ղ.

62.

Ղուրբան իմ ծուցիդ նըռանըն,
Հոքիս տամ շիմշատ կըռանըն,
Թաք պառկիմ եարի դըռանըն, —
Գլխօքըս քար իմ ասում։

—

Հաքիլ իս ասլաս խասեմէն,
Խրմեցու ձեռիդ թասեմէն,
Համաշա էշխիդ բասեմէն
Երվում իմ, ճար իմ ասում։

—

Բաղ կու սիրիմ էս բաղման չիմ,
Բաղի տիրուչըն ճանանչիմ.
Բըլբուլ իմ, սիրով վարթ կանչիմ, —
Հիդ քաշվի՛, խա՛ր իմ ասում։

—

Մէջլիսներու խաղըն դուն իս,
Վանքերումըն տաղըն դուն իս,
Սայեաթ-Նովու բաղըն դուն իս,
Կարօտ իմ, բաւ իմ ասում։

63.

Ղամբարակայլ սրբոյ տօնիս, աւետիս.
Ի միտ առցուք զխորհուրդ բանիս, աւետիս.
Քանզի յերկնից Տէրն խոնարհի, աւետիս.
Ի կոյս մօրէ այսօր ծնանի աւետիս.
Ի Բեթղեհեմ քաղաք Դաւթի, աւետիս.
Ի գերեզմանըն Եւայի, աւետիս։

—

Աստղ մի պայծառ յերկինս յայտնի, աւետիս.
Առաջնորդէ մուգուց դասի, աւետիս.
Առ որ եկին երեք արքայ, աւետիս.

Ոսկի, կընդրուկ բերին ընծայ, աւետիս.
Տեսին զՅիսուս մանուկ տըղայ, աւետիս,
Բազմեալ 'ի գիրկս Մարիամայ, աւետիս։

—

Զուարթունք երկնից պար առնէին, աւետիս.
Զփառք 'ի բարձունս երգէին, աւետիս.
Զի զոր տեսին, վկայեցին, աւետիս,
Թէ Բանն Աստուած էառ մարմին, աւետիս.
Հովիւքն 'ի յայրն ընթանային, աւետիս.
Վասն հրաշիցն զարմանային, աւետիս։

—

Այսօր եւայ ընդ Ադամայն, աւետիս,
Բերկրեալ հոգւով յոյժ զուարճանան, աւետիս.
Որք խաղային և ցնծային, աւետիս,
Յորժամ տեսին զծնունդ Փրկչին, աւետիս.
Բանն Եսայեայ աստ կատարի, աւետիս.
Թէ կոյս յղացեալ ծնցի որդի, աւետիս։

—

Բամք նախահարց հոգւով խնդան, աւետիս.
Սուրբ մարգարէքն ուրախանան, աւետիս.
Զոր ասային, կատարեցաւ, աւետիս.
Աստուած յերկնից յերկիր իջաւ, աւետիս,
Որ եբարձ ըզխռովութիւն, աւետիս,
Եւ հաստատեաց զխաղաղութիւն, աւետիս.

—

Ուրախացեալ մեք ցնծասցուք, աւետիս.
Եւ ծնեցելոյն ըզփառս տացուք, աւետիս.
Խորոց սրտիւ մեղայ տացուք, աւետիս.

Սրբեալ հոգւով արտասուեցուք, աւեսիս.
Զաղօթս և զնուէրս ընծայեցուք, աւեսիս,
Եւ ընդ մոգուցն երկիրպագցուք, աւեսիս.

—

Խիւծեալ պիտակ մեղօք գերիս, աւեսիս.
Ղազար և եթ երգող տաղիս, աւեսիս.
Մաքրեա զխորհուրդ, զմիտս և զհոգիս, աւեսիս.
Արդարութեամբ կեալ 'ի մարմին, աւեսիս.
Որք 'ի սրբոյ տօնիս տրքնին, աւեսիս.
Յայսոց չարաց զերծեալ փրկչին, աւեսիս։

Մ.

64.

Մանեակ չքնաղ պարանոցիդ կապեցի,
Կապեցի, ո՛հ կապեցի.
Այս իմ նոր երգ քեզ յիշատակ մատուցի,
Մատուցի, ո՛հ մատուցի։

—

Արեգական դու նման ես գեղեցիկ,
Գեղեցիկ, ո՛հ գեղեցիկ.
Նմա յերկինս և քեզ յերկրի նման չիք,
Նման չիք, ո՛հ նման չիք։

—

Ամեալ խմբից իշխանութեանց թագուհի,
Թագուհի, ո՛հ թագուհի.

Սերտ սիրով զքեզ ջանամ սիրել տիրուհի,
Տիրուհի, ո՜հ տիրուհի։

—

Իմ լեզուի բանք գովել զքեզ ոչ բաւեն,
Ոչ բաւեն, ո՜հ ոչ բաւեն.
Վարժք մուզայից, դասք վերնայնոց թող գովեն,
Թող գովեն, ո՜հ թող գովեն։

—

Աստուածային տաճար Մարիամ արդ ո՞ւր է.
Արդ ո՞ւր է, ո՜հ արդ ո՞ւր է.
Ջանք մեր սրտի աստ գտանել 'ի զուր է,
Ի զուր է, ո՜հ 'ի զուր է։

—

Աշտականաչ սարդ վարդենի վայել է,
Վայել է, ո՜հ վայել է.
Թէ Մարիամ անդ գտանի ուր կայանն,
Ուր կայանն, ո՜հ ուր կայանն։

65.

Մայր ցանկալի, հիանալի, յոյժ տենչալի աննման,
Ծաղիկ լուսոյ անտանելւոյ դու երկնայնոյ օթարան,
Կոյս գովելի, երանելի, միշտ սխրալի Մարիամ.
Մայր գովելի, լի լի լի լի Մարիամ։

—

Անապական մայր իսկական կոյս եզական տիրուհի,
Անհամեմատ և անարատ սուրբ գթառատ թագուհի,

Կոյս գովելի, երանելի, միշտ սիրալի Մարիամ.
Մայր գովելի լի լի լի լի Մարիամ։

—

Յաւէտ բարի փայլուն տեղի միշտ բերկրալի իսկուհի,
Դու գերազանց համայն ազանց լուր բերկրութեանց դշխուհի,
Կոյս գովելի, երանելի, միշտ սիրալի Մարիամ,
Մայր գովելի լի լի լի լի Մարիամ։

—

Մայր սուրբ յուսոյ և սուրբ սիրոյ գերայարգոյ մաքրասուն,
Լոյս բնակարան ցոյց օթարան, դու աննման սիրասուն,
Կոյս գովելի, երանելի, միշտ սիրալի Մարիամ.
Մայր գովելի լի լի լի լի Մարիամ։

—

Քեզ աղերսեմ յոյժ վեր երգեմ աղաղակեմ իսկուհի,
Գրկեալ հայցեմ ի քէն մաղթեմ միշտ հառաչեմ մայր բարի,
Կոյս գովելի, երանելի, միշտ սիրալի Մարիամ.
Մայր գովելի լի լի լի լի Մարիամ։

—

Տաճար փայլեալ խորան կազմեալ միշտ փայլեցեալ սրբուհի,
Անեղ Բանին մայր Յիսուսի թագուհի,
Կոյս գովելի երանելի միշտ սիրալի Մարիամ.
Մայր գովելի լի լի լի լի Մարիամ։

66.

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պտրում եմ։

—

Բայց նոքա միշտ յեղյեղուկ
Պըղտոր ջըրով եզերքին
Դարիւ դարիւ խըփելով
Փախչում էին լալագին:

—

„Արաքս՝ ինչո՞ւ ձըկանց հետ
Պար չես բռնում մանկական,
Դու դեռ ծովը չի հասած՝
Սըգաւոր ես ինձ նըման:

—

Ինչո՞ւ արցունք ցայտում են
Քու սէգ, հպարտ աչերից,
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից:

—

Մի՛ պըղտորիլ յատակըդ,
Հանդարտ հոսէ խայտալով,
Մանկութիւնը քու կարճ է.
Շուտ կը հասնիս դէպ ի ծով:

—

Վարդի թփեր թող բըմբին
Քու հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչև առաւօտ:

—

Ամըշտադալար ուռիներ
Սառ ծոցի մէջ քու ջըրին
Ճըկուն ոստըն ու տերև
Թող թաց անեն տապ օրին:

—

Ափերիդ մօտ երդելու
Հովիւք թող գան համարձակ,
Գառն ու ուլը քու վըճիտ
Ջուրը մրտնին միշտ արձակ:„

—

Ամէնքը ուռցուց Արաքսը,
Փըրփուր հանեց իր տակից,
Ամպի նըման գոռալով՝
Էսպէս խօսեց յատակից:

—

—Խիզախ, անմիտ պատանի,
Նիրհըս ինչո՞ւ դարևոր
Վըրդովում ես, նորոգում
Իմ ցաւերը բիւրաւոր:

—

Սիրելիի մահից յետ
Ե՞րբ ես տեսել, որ այրին
Ոտքից գըլուխ պըճնուի
Իր զարդերով թանգագին:

—

Որի՞ համար զարդարուիմ.
Որի՞ աչքը հրապուրեմ,
Շատերն՝ ինձ են ատելի,
Շատերին՝ ես օտար եմ:

—

Կար ժամանակ, որ ես էլ
Շըքեղազարդ հարսի պէս
Հազար ու բիւր պչրանքով
Փախչում էի ափերէս։

—

Յատակըս պարզ ու վըճիտ,
Կոհակներըս ոլորուն.
Լուսաբերը մինչև այգ
Ջըրիս միջին էր լողում։

—

Ի՞նչըս մընաց այն օրից,
Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
Ո՞ըը իմ շէն քաղաքից,
Ո՞ր բերկրալի տեղերըս։

—

Տուրքը ջըրի ամեն օր
Իր սուրբ ծոցէն Արարատ
Մայրախընամ ինձ սընուն դ
Պարգևում է լիառատ։

—

Բայց ես այն սուրբ ջրերով
Սուրբ Ակոբի աղբիւրին
Պիտի ցողեմ արտօրայք
Իմ ատելի օտարին։

—

Կամ՝ կենատու իմ ջըրով
Ափերիս մօտ կըկըզած
Իւր նամանգը կատարէ
Թուրք կամ Պարսիկը. . .։

—

Մինչ իմ որդիք—ով գիտէ,
Ծարաւ, նօթի, անտէրունչ
Օտար աշխարհ յածում են
Թոյլ ոտքերով կիսաշունչ. .

—

Հեռու հեռու քըշեցին
Բընիկ ազգը իմ Հայկեան,
Նորա տեղը ինձ տուին
Ազգ անկըրօն, մոլեկան։

—

Դոցա համար զարդարեմ
Իմ հիւրընկալ ափերը.
Եւ կամ՝ դոցա հրապուրեմ
Ճըպռոտ, պըլշաղ աչերը։

—

Քանի որ իմ զաւակունք
Այսպէս կու մընան պանդուխտ՝
Ինձ միշտ սրդուոր կըտեսնէք,
Այս է անխաբ իմ սուրբ ուխտ։„

—

Էլ չի խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,
Օղակ օղակ օձի պէս
Առաջ սողաց մոլեգին։

67.

Անվնից շատ առաջ կար մի թագաւոր,
Հոգւով գեռ արի, գլխով ալեւոր.
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն դարը։
Ունէր նա երկու մատաղհաս աղջիկ,
Մինը խիստ արգեղ, միւսը գեղեցիկ.
Մի օր արգեղը ասաց միւսին.
„Երթանք ծովի ափ, քուրիկ միասին„։
Սիրունը գընաց առաջից արտում,
Տըգեղը ետնից ոխ պահած սրտում.
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քըրոջ գըլորեց նա ցած։
Կանչեց կիսամեռ սիրունը ջըրից.
„Քուրիկ իմ, քուրիկ փրկէ ինձ մահից.
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էս քեզ լինի, պարգևէ՛ ինձ կեանք„։
—Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ։
„Քուրիկ, մի՛ թողնիլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն փեսաս կուտամ անարտունչ„։
Տըգեղն սիրաը դարձել էր ժէռ քար,
Քըրոջ խնդիրքը թողեց անկատար։
Զըկնորսը ծովը ձըգեց մեծ ուռկան,
Բըռնեց մարմինը սիրուն աղջկան.
Ջըրից հանեց, դըրեց ափի մօտ,

Շատ ծաղիկ ցանեց վըրան ու շատ խոտ։
Մի աշուղ անցաւ, տեսաւ աղջկան,
Լացեց ու առաւ, դըրեց ուսի վրան.
Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Զորացուց նորա մարմնու դիպի հիւթը.
Գեղեցիկ տաւիղ շինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից։
Երբ որ ամեն բան պատրաստեց կարգին,
Գընաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մըտաւ դահլիճ շըքեղ զարդարած,
Տեսաւ տըգեղին փեսի մօտ կայնած.
Բացեց բերանը, լարերին խըփեց,
Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց.
„ Հընչէ՛ իմ տաւիղ, հնչէ՛ համարձակ,
„ Հարազատ քոյրըս խըլեց իմ պըսակ.
„ Լըսէ՛ իմ ծընօղ, լըսէ՛ սիրական,
„ Հարազատ քոյրըս խըլեց իմ փեսան.
„ Լըսէ՛ ժողովուրդ, լըսէ՛ անխըռով,
„ Հարազատ քոյրըս գըլորեց ինձ ծով „։
Միւս օր դահլիճք խարոյկ շինեցին,
Մահապարտ քըրոջ մէջը գլորեցին։
Հուրը պըլպըլաց, աղջիկը կանչեց.
„ Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց „։

68.

ՄՈԶԻ։

Իսկի օչով չի հարցնում իմ դարդերս, ա՛յ իմ Մոզի.
Գիշեր ցերեկ միտք անելով, մանդալով մեռայ, իմ Մոզի։

Իմ քոռ անբաղդ իղբալս իմացէք,
Աչքս բացի հէր չի տեսայ.
Գաշեցի էն նեղ նեղ օրերն,
Գամակիս աղբէր չի տեսայ։
Աներս մէկ Մոզի տվուց,
Էն էլ բերի, խէր չի տեսայ։ Խակի օչով և այլն։

—

Ես որ աներանց գնացի,
Տասն երկու օր էնտեղ մնացի.
Անկապ առաչս քցեցին,
Թալիմով ուտայ իմ Մոզի,
Ճակատդ զաշխա եմ Մոզի։ Խակի օչով և այլն։

—

Գեղ որ բերի էջմիածին,
Սիրաս ընկաւ տափակ հացին,
Օրով ցերեկով բռնեցին,
Կանչեցի հարայ իմ Մոզի.
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Խակի օչով և այլն։

—

Մոզին էր իմ խելքի բունը,
Գանդուի քու տանողի տունը.
Բերի տասներկու մինալթունը,
Որ քեզ առնեմ թայ իմ Մոզի,
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Խակի օչով և այլն։

—

Կրիվն ասաւ „քու Մոզին ո՞ր տեղ էր կապած„.
—Ի՞նչ ես անում, մէկ Մոզի էր, կորաւ, գնաց.
Նա ասեց, ես տեսայ քու Մոզին տարան.

Երկու սարվաղ չաթուն դրած պողին տարան։
Դու մի՛ ասիլ, էն անպիտան սապոնչիքն
Տոպրակներով խորխողին տարան։
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Իսկի օչով և այլն։

—

Գեզ որ տարան մորթեցին,
Կաշիդ դանակով քերթեցին.
Կողերդ ու անդամներդ ջարդեցին,
Դրին չորս տեղ փայ իմ Մոզի։
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Իսկի օչով և այլն։

—

Գաշեցին, երկու լեզը եկաւ եղդ,
Իլլահի կարճ կարճ կողերդ.
Գոռ Մաշադի Ալու տանն
Էլար զաուրմա իմ Մոզի։
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Իսկի օչով և այլն։

—

Գեաղշխանի բաղչի տակին
Մէկ փոսում փորդ թափած էր,
Մտիկ տուի քարի միջին,
Տեսի պճեղներդ բաց էր.
Ընտեղ սրտիս դայեաղ էլաւ,
Որ հինդ վեց օրուայ կերած էր։
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Իսկի օչով և այլն։

—

Գեղարդակիր վարդապետը
Ինձի կանչեց Ղազարապատը.
Աղաչանք արաւ Ենոքեանը,

Որ չտամ արգա իմ Մոզի։
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Խակի օչով և այլն։

—

Վանքի բոլոր միաբանն
Զիմանայ էս քամբաղդ բանն,
Լսելով սրբազանն,
Որ չգտայ իմ Մոզու ջանն։
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Խակի օչով և այլն։

—

Աղա Գրիգորի տանն
Տէր Ղազարը խոսքը բացաւ,
Ասացի Մոզու դաստանն,
Էնտեղ շատ մարդ ուրախացաւ։
Պլուզենց բեգովլաթն
Մէկ թունդի գինի խոստացաւ.
Էն էլ չի տուեց, վերջը խաբեց, սուտ դուրս եկաւ։
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Խակի օչով և այլն։

—

Քեզի թողեն սովաձ, ծարաւ,
Քու դարդերդ սիրտս առաւ.
Կարապետը թարիֆթ արաւ,
Որ անեմ քեզ շահ իմ Մոզի։
Ճակատդ զաշխա իմ Մոզի։ Խակի օչով և այլն։

69.

Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի,
Միշտ ազատ, ուրախ, խմում ենք գինի։
Տրա լա լա լա լա լա լա լա լա լա լա լա լա լա։

Ամեն սար ու ձոր, ամեն տափ, մէրթ,
Մեր պարտաներն են սաղ բոլոր տարի։ Տրալլա և այլն։

—

Մեր Ատամանը մեզ լաւ է պահում,
Մեր ամեն հոգսը նա ինքն է քաշում։ Տրալլա և այլն։

—

Թէ գործ պատահի, ու լաւ կատարենք,
Միշտ մեր փայը մենք հալալ ստանում ենք։ Տրալլա և այլն։

—

Ամեն երկրումը ջոկ անուն ունենք,
Ամեն տեղ սիրող մենք հեշտ ճարում ենք։ Տրալլա և այլն։

—

Ուրեմն խմենք լիք թասով գինի,
Մեզ նման քէֆով ոչ ոք կեանք չունի։ Տրալլա և այլն։

70.

Մեր քաջ Հայոց զօրութեան } 2 անգամ
Վեր կացէք, ասաց Արամ.

Առաջեաւ բացէք նշան,
Գնանք Հայ լեզուն տարածենք։

Ո՛հ Արամ, Արամ, Արամ։

—

Նիւքար զատրուկն Ասորին
Բարբառ կոչէ առաջին.
Գլուխն յաշտարակ մեխեցէք,
Որ յերկնից սորվի հայերէն։ Ո՛հ և այլն։

—

Յորդան տուք, զորք ծն յորդան,
Դէպ ի կողմն արևմտեան.
Պայաբիս Քաղեայ Տիտան
Դիք զի տապաստ 'ի դամբան։ Ո՛հ և այլն։

—

Յորդան տուք ծն, զորք յորդան,
Տեարք լայնալիճ աղեղան,
Քնքուշախօս ամբոխին
Տալ զլեզու Հայկաբան։ Ո՛հ և այլն։

—

. . . . . .
. . . . . .

—

. . . . . .
. . . . . .

71.

Մայրենի լեզու, մայրենի բարբառ,
Ախորժ ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած.
Մանկական լեզուի թոթովանք ակար
Հնչումես իմ մէջ դու միշտ անդադար։

—

. . . . . .
. . . . . .
. . . . . .

—

Գեղեցիկ լեզու, հրաշալի լեզու,
Այդ ինչպէս քաղցր հնչում ես ինձ դու։
Կամիմ աւելի քաջ ծանօթանալ
Քո ձոխ գանձերին, հոգւով հայանալ։
Ասես թէ ահա գանչում էին ինձ
Պապեր ու հայրեր խոր գերեզմանից։

—

Հնչիր, դու հնչիր այժմ և յաւիտեան
Մայրենի լեզու, բարբառ սիրական։
Արի՛, բաձրացիր հնութեան փոշուց
Դու իմ Հայ լեզու մոռացած վաղուց։
Ըզգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով,
Որ ամենայն սիրտ վառուի քո սիրով։

—

Ամեն տեղ փչում է Աստուծոյ շունչը,
Սուրբ է այո՛ միւս, այլ ձև ու ոճը։
Բայց թէ աղօթել գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր։
Իմ երանական մտածութիւնքը —
Ապա կը խօսեմ իմ մօրս խօսքը։

72.

Մեր նախնիքը ազգի համար իրանց կեանքը զոհեցին,
Թշնամեաց դէմ միշտ աներկիւղ զէնքը ձեռին դիմեցին։
Նրանց առաջնորդ ազգի սէրն էր,
Նրանց խրախոյսը մեր հաւատն էր։

Սրանով նրանք քաջ անունը իրաւամբ ժառանգեցին։

. . . . . .
Մեզ պահպան մեր սուրբ հաւատը։ } 2 անդամ

—

. . . . . .
. . . . . .

73.

Մեծափառ արքայ մեր
Ի մարտ կամի ելանել.
Լարեցէք ազեղներ
Որպէս մեզ վայել։

—

Անուշակ ու շուշան
Թող զարդարեն ճանապարհ.
Անդադար թող ծափ տան
Սար, դաշտ ու անտառ։

3.

74.

Յերկու ձեռին երկու մոմ՝
Ինձ ընդ առաջ ել իւր տան.
Մի՛ հարցաներ—ո՞վ էր նա,
Հրեշտակ, թէ կոյս լուսագեղ։

—

Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար.
Այն ի՞նչ օր էր և ի՞նչ ժամ,
Ցորում տեսի ես կեանք նոր։

—

Լիաձրագ յայնմիկ տան,
Ի մարգաշատ բաղմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Ցոտին կայր ոմն անդ յանկեան։

—

Այն օրիորդն էր պարկեշտ,
Ինձ պատահեալ առ դրամբ տան,
Զոգիս գրաւեաց յիւր 'ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։

—

Արգարտափայլ մարմինն էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Զոտիւքն իւր վարսք քարշ գային,
Ի գոյն քրքմոյ փայլէին։

—

Դիմաց շքեղ երևոյթ,
Ցօնից, աչաց, այտից գեղ,
Շրթանց, լեզուին համանոյշ
Խոստանային ինձ կեանք նոր։

—

Ա՛խ ասացի, թմրեցայ,
Սիրտս սկսաւ դողդողալ.
Զաշխարհ համայն մոռացայ,
Ի գեղ կուսին ափշեցայ։

Բամբ կոցելոցն յայն հանդէս
Ընդ իմ մեծ բաղդ մախային,
Զի մերձաւորք այն կուսին
Փեսայ զանձն իմ ձայնէին։

—

Եթէ զարշխարհ լի գանձիւք
Ինձ ոք տուեալ 'ի պարգև՝
Ոչ տեսանէր այնքան բախտ,
Որքան 'ի գալս առ կուսին։

—

Արդեօք գուցէ՞ յարևարհի
Սիրոյ նման ինչ հզօր,
Սէր 'ի ձեռաց Արարչին
Մեզ մահացուացս է ձիր նոր։

—

Անրախորհուրդ ազգ մարդկան՝
Շատ մի՛ սիրեր դու զաշխարհ,
Նա թշնամի է անգութ,
Զար քան զքարբ մահաթոյն։

—

Ցանցիւ սիրոյ գքեզ կարթէ,
Ի հաղթ անել ըմբռնէ.
Ապա զսիրոյդ առարկայ
Ի քէն արագ կողոպտէ։

75.

Յառաւօտ կենաց կուսանիս,
Ցարշալոյս աւուրց անմեղիս,

Խորշակ մահուան տարածի,
Ա՛խ, լոյս աչացս պակասի։

—

Ա՛յ ծանօթ լերինք և հովիտք,
Ա՛յ պայծառ դաշտք ծաղկափթիթք,
Ահա 'ի ձէնջ հրաժարիմ,
Փութով եդայց 'ի շիրիմ։

—

Լացէք զիս, ով անտառք, բլուրք,
Լացէք հարք, մարք, եղբարք և քորք,
Զիս փոյթ զենցէ սուր ուխտին,
Յօդուածքս այժմեն սարսափին։

—

Արիւն իմէ զին փրկութեան
Դիցամոլ տանն Իսրայէլեան,
Սեղապարտքն ազատ մընան,
Անմեղ կեանք իմ չընքանան։

—

Այր իմ, ա՛խ դու մի՛ շատ ցաւիր.
Հօրս ուխտին բնաւ մի ներհակիր.
Յաստուած բարձրեալն զյոյս քո դիր,
Թէր զզարդս իմ, մի՛ տրխմիր։

—

Դուք դստերք տոհմին Յակոբեան,
Շուրջ զինև կացէք միաբան.
Երգեցէք զերգս հարանութեան,
Միշտ ասնեցէք զիմ վախճան։

—

Աստուած մեծ՝ փառք Իսրայէլի,
Ընկալ զիս իբր զհոտ կնդրկի,
Իբրև զզոհն Աբէլի,
Իբրև զորդին Սարրայի։

—

Բաբունեայց վճիռ համաձայն
Ոչ կարաց տալ մահուս խափան,
Լեր դու, Տէր իմ, օգնական,
Դու հեշտ արա զիմ վախճան։

—

Եղկելւոյս ծընողք ցաւալի
Մընացին առանց զաւակի,
Տէր, տուր նոցա սիրտ արի,
Սեղմեա զմորմոք դառն վըշտի։

—

Անանիկ՝ երամք հրեշտակաց
Առ երկնիւք կան թեւատարած,
Զիս հրաւիրեն յԱդին բաց,
Զիս կոչեն հարան հօր փառաց։

—

Ընկարէն քօղն իմ հարանութեան
Փոխարկի 'ի պատան թաղման.
Իմ ազնաշարդ հարանարան
Եղև այս խոր գերեզման։

—

Ցուցէք ինձ զիմ մահու գործի,
Զսուրբ զէն զոհիս արժանի,
Արդ ողջ լերուք, սիրելիք,
Օրհնեալ է Տէր, պիղծ են դիք։

76.

Յորէս էկաւ մէկ մէկ ուտէ, վա՜յ վա՜յ,
Աղուէսն էկաւ լանչիկ լանչիկ, վա՜յ վա՜յ,
Ասեր ունէր կարճիկ կարճիկ, վա՜յ վա՜յ,
Սիրտը ուզէց հաւի քարճիկ, վա՜յ վա՜յ,
Վա՜յ իմ չալիք-մալիք, չալմալալիք,
Զալմ պտորիկ, չալմապտիկ, տուշտահոտ,
Տմպլաճակատ, խաշխաշպիկ, տուզիկ ճուտեր։

—

Աղուէսն պառկեց աղբի տակին, վա՜յ վա՜յ,
Աչքերը ձգեց չաղ հաւ ճագին, վա՜յ վա՜յ,
Նեռով կըտամ աչքի տակին, վա՜յ վա՜յ,
Որ մօտ չի գայ նա մեր բակին, վա՜յ վա՜յ։

—

Ես մի բատուկ տանը պահեմ, վա՜յ վա՜յ,
Ելեմ երթամ ճագերս հանեմ, վա՜յ վա՜յ,
Ես էն աղուէսն կու սպանանեմ. վա՜յ վա՜յ։

—

Յորէս էկաւ ջաւաթ-խանը, վա՜յ վա՜յ,
Ո՞վ սորվացրաւ ամէն բանը, վա՜յ վա՜յ,
Աղջիկ՝ վեր կաց, ջուր տուր հորթին, վա՜յ վա՜յ,
Մեռնի կատուատիրոջ որդին, վա՜յ վա՜յ։

—

Ա՛յ տղայ, անունըդ է Աւագ, վա՜յ վա՜յ,
Քեզ կուսացնեմ մեղը ու կարագ, վա՜յ վա՜յ,
Համ սիրացու, համ սարկաւագ, վա՜յ վա՜յ,
Ասեր ունիս հաւաք-մաւաք. վա՜յ վա՜յ։

77.

Յորժամ եղև գարուն՝ արև ծագեցաւ,
Հարաւ հողմն հնչեաց, սառն հալեցաւ,
Երկիր կանանչացաւ, ծառքն ծաղկեցաւ.
Խմենք, եղբարք, գինի՝ մեզ անոյշ լինի,
Անէք, խմենք գինի, բանն Աստուած շինի։

—

Ո՞վ եղբարք, նստեալ էք ծաղկեալ ծառի տակ,
Զեռներիդ է գինին կարմիր ու յստակ,
Թասի մէջ անկանի ծաղիկ ըսպիտակ. Խմենք և այլն։

—

Առէք կարմիր գինի և լցրէք շուտով,
Բերէք թաղա գառն սինի սարփուշով,
Ղաբլուվլաւ ձգէք մեխակով, նըշով. Խմենք և այլն։

—

Թող չիման տեղ նստիմք, ջուր լինի և խոտ,
Կարմիր գինի խմենք մէկմէկի մօտ,
Միմեանց նուիրեմք զվարդ անուշահոտ. Խմենք և այլն։

—

Վաղուն ոչ գիտեմք՝ թէ զի՞նչ ծընանի,
Մարդուս կեանքն վայրի ծաղկի նըմանի,
Որ այսօր բացուել է՝ վաղուն անցանի. Խմենք և այլն։

—

Նոր գարուն, նոր արև, ծաղիկ շնորհաշարդ,
Այսուհետև բացուի մանուշակ ու վարդ,
Զայն բիւլբիւլ լինն, սաւորակին լսէ ամեն մարդ. Խմենք և այլն։

—

Այլև խաղաղութեամբ խրմելն է հալալ,
Ոչ հարբել, գուռալ և ոչ բարկանալ,
Ուրախութեամբ խրմել, սիրով գուարճանալ. խմենք և այլն։

—

Գնա՛, լաց քո մեղքն, նախաշ ցոփեաթան.
Աշխարհս անցաւոր է, չէ մընացական.
Դուք կերէք, խմեցէք եղբարք սիրական,
Եւ օրհնեցէք զԱստուած այժմ և յաւիտեան։

Ն.

78.

Ներ բահար ես գովելի,
Թազա նուզբար ես գովելի,
Դու աննման ես, գեղեցիկ,
Նախշ ու նկար ես գովելի։
Թայ չունիս աշխարհքումըս,
Եարաբ գու ինչ օրինակ ես,
Բըլբուլ ես գարնանային,
Ճարտարախօս ծիծեռնակ ես,
Բաց արա՛ արքայութեան
Բաղի դուռը քանի՞ վակես,
Գիտեմ՝ հոտով անուշ ես,
Վարդ ու մեխակ մանուշակ ես,
Կամ՝ խաթայի—խուրթայի
Մուշկ ու ամբար ես գովելի։

—

Լուսով ես պատկերովըդ
Քան զարեգակի վերայ.
Փայլում ես մաշալի պէս,
Գունով ես կրակի վերայ.
Պառվում ես ճրագի պէս
Ոսկի աշտանակի վերայ,
. . . . . .
. . . . . .
Թրաշ արած անփին եաղութ,
Ջավահիր քար ես գովելի։

—

Ի՞ր սեղանց որ սեղ, թուրինջ,
Ըռաստ էկար էս բահարին,
Դէս ու դէն պառուտ գալով՝
Ախար ընկար էշխի ճանկըն.

Պրծընելու ճար չի կայ, Ի՞նչ կանի հեքիմ ջարրահը,
Հոգիս կառնի զալում մահը. Ինձ համար անմահական
Թէ հաղար դարդ ունենաս, Դու դեղ ու ճար ես գովելի։

79.

Ցաղելիս իմ անհամեմատ
Անձս դիւթեց քո շնորհքը.
Ցայդ և ցերեկ և անընդհատ
Միմիայն դու ես իմ ցնորքը։

—

Երանի թէ աղաղակիս
Ազդէ անարատ հոգւոյդ
Եւ ես սիրատանջ էակս
Արժանանամ սիրոյ քոյդ։

—

Առանց սրտի վայելչութեան
Կեանքս չունի բնաւ հրապոյր.
Ամեն վայելչութիւնք բնութեան
Թուին ունայն ինձ և թափուր։

Շ.

80.

Շեմիկ մի՛ ժաժա.
Ես եմ ժաժալու,
Շուշան տանելու։

—

Տախտիկ մի՛ թնտա.
Ես եմ թնտալու,
Շուշան տանելու։

—

Հողմիկ մի՛ սրա.
Ես եմ սրաալու,
Շուշան տանելու։

—

Ծառուկ մի՛ դողա.
Ես եմ դողալու,
Շուշան տանելու։

—

Տերևիկ մի՛ թափի.
Ես եմ թափելու,
Շուշան տանելու։

—

Արև դու մ՚ելնի.
Ես եմ ելնելու,
Շուշան տանելու։

—

Արև մի՛ պատի.
Ես եմ պատելու,
Շուշան պատելու։

—

Լուսին դուն մ՚ելնա.
Ես եմ ելնալու,
Շուշան տանելու։

Լուսին մի՛ պատի.
Ես եմ պատելու,
Շուշան տանելու։

—

Աստղունք մի՛ ցոլաք.
Ես եմ ցոլալու,
Շուշան տանելու։

—

Կռունկ մի՛ կըղա.
Ես եմ կըղալու,
Շուշան տանելու։

—

Մէրիկ, դուն մի՛ լա.
Ես եմ լալու,
Շուշան տանելու։

—

Հէրիկ, դու մի՛ լա.
Ես եմ լալու,
Շուշան տանելու։

—

Աղբէր դուն մի՛ լա.
Ես եմ լալու,
Շուշան տանելու։

—

Զմէրիկ խաբեցին թօփ մը շեշով.
Զհէրիկ խաբեցին կուռէ մը ղինով.

Զաղբեր խաբեցին Ջուխտակ մը ճգմով.
Զքուրիկ խաբեցին մատիկ մը հինով։

—

Զգրամի հանգուրց արձակեցին,
Զաղջիկ մամուց ջոկեցին։

—

Ամրիկ մի՛ աւլի զտախտիկ,
Ոչ աւրի քու աղջկայ հետիկ։

—

Թողլ մընայ քեզի նըմուշիկ,
Որ հանիս զքու սրտի հասրաթիկ։

—

Զչամիչ մաղով մաղեցին,
Աղջկայ ճիպեր լեցուցին,
Ղարիպ ճամբուն դըրեցին։

Ո.

81.

Ուղիղ գնեատունից ես տուն եմ գնում,
փողոց, ա՛յ փողոց, էդ ի՞նչ եմ տեսնում.
Աջ գընաս, թէ ձախ՝ ծուռ են երկուսն էլ.
փողոց՝ տեսնում եմ դու էլ ես հարբել։

—

Լուսին ջան՝ ուէլքդ ինչի՞ է ծըռած,
Մէկ աչքդ կապուել, միւը կէս բաց.
Դու էլ ես կոնծել, ա՛յ դու անամօթ,
Ամաչի՛ր ինձնից, վաղուցուայ ծանօթ։

—

Բա՛ էստեղ էստեղ, — տէս լապտերներն էլ
Չեն կարող ուղիղ ոտքի վրայ կանգնել,
Մէկ պարզ են վառվում, մէկ՝ սատիկ խաւար,
Կամ թէ՝ պատից պատ կըպչում անդադար։

—

Աղբեր՝ էս գիշեր ամենքն էն հարբել,
Ի՞նչ բան է մէնակ մէնակ ծոմ պահել.
Չէ, էդ կըլինի խաղաղ գըժուլթիւն,
Ուրեմն նորից նոր դառնամ գնեռուն։

82.

Ուլ էիր և տիկ. դարձար,
Տկահան չարչարուեցար,
Հալվաբրի դարի դուսին
Տուինք մշակի ուսին։
Ո՛վ, ով սուրբ ակնոր,
Լուլէդ բաց, մեզ ողորմեա՛։

83.

Ասաի գուքաս դարիբ բլբուլ,
Դու մի՛ լաց 'լի, ես եմ լալու.

Դու վարթ պառէ, ես գոզալին.
Դու մի՛ լաց 'լի, ես եմ լալու:

—

Սրի՛ բլբուլ, խօսի բառքն,
Օխնըվի՛ քու էկած սարքն.
Քի՛ վարթն էրէց, ինձ իմ եարքն,
Դու մի՛ լաց 'լի, ես եմ լալու:

—

Ման իմ գալի գիդարի հիդ,
Վունց զարիբ բլբուլ խարի հիդ.
Դու վարթի հիդ, ես եարի հիդ.
Դու մի՛ լաց 'լի, ես եմ լալու:

—

Սալբուի նման կանանչ իմ,
Ե՛կ, խօսի՛ ձայնըդ ճանանչիմ.
Դու վարթ կանչէ, ես եար կանչիմ,
Դու մի՛ լաց 'լի, ես եմ լալու:

—

Ղարիբ բլբուլ՝ ձայնիդ մալում,
Ես ու դու էրվինք մէ հալում.
Սայաթ-Նավէն ասաց՝ զալում,
Դու մի՛ լաց 'լի, ես եմ լալու:

84.

Ո՞վ դու բարեկամ այրած սրտերու,
Խօնարհ գիշերոյ, հոգեակ վարդերու.

Երգէ բլբուլիկդ, երգէ 'ի սարէդ,
Զքաջն Հայոց Վարդան երգէ հոգւոյս հետ։

—

Թադէի վանուց ձինիկդ ինձ դիպաւ,
Սրտիկս որ 'ի խաչն էր կիպ՝ թունդ առաւ.
'Ի խաչին թևէն թըռայ ու հասայ,
Գլուայ գքեզ 'ի դաշտ քաջին Վարդանայ։

—

Բլբուլ՝ քեզ համար մեր հարքն ասացին,
Թէ չէ հաւ բլբուլ մեր Աւարայրին.
Եղիշեայ հոգեակն է քաղցրազրուցիկ,
Որ զՎարդան 'ի վարդ տեսնու կարմրիկ։

—

Զըմեռն յանապատ կու գնայ կայ 'ի լաց,
Յարտազ գայ գարունն 'ի թուփ վարդենեաց
Երգել ու կանչել ձայնիւ Եղիշեայ,
Թէ պատասխանիկ արդեօք Վարդան տայ։

85.

Ուրախ լինինք եղբարք, քանի որ կարիճ ենք,
Թէ չէ՝ շուտով կանցնի մեր մանկութիւնը,
Կուգայ մեզ կու կոխէ ծերութեան ցաւը,
Ապա ի՞նչ պիտ' անենք մենք ան ատենը։

—

Աղտորանք երգելու՝ քանի որ շունչ ունինք,
Թէ չէ գարնան ծաղկի պէս շուտ կու թա ռամինք,

Ափսոս է, ափսոս է ձեր ոյժն ու սիրտը,
Ցաւ կը լինի մեր սրտին անցած օրերը։

—

Եկ սիրենք, եկ սիրենք, եղբարք մէկզմէկու,
Մեր մէջեց դէն ձգենք չար բամբասանքը,
Բայց սիրտով, պարզ աչքով մէկմէկու նայինք,
Թոռ սիրով անց կացնենք մեր մանուկ կեանքը։

—

Եղբարք, խմենք զինին Հայ ազգի կեանքը,
Որ ամէնը պահպանէ իւր սուրբ հաւատը.
Քաջ սիրտով, վառ սիրով իւր հաւատը,
Ուրեմն դարդբկենք մենք մեր դաւաթը։

86.

Ո՜հ ի՞նչ անուշ և ինչպէս զով
Առաւօտուն փրչես հովիկ
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մաղերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գնա՛, անցիր սրտէս 'ի բաց։

—

Ո՜հ, ի՞նչ ազու և սրտազին
Ծառոց մէջէն երգես թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Ըզմայլեցան ի քոյ ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, թըռիր սրտէս ի բաց։

—

Ո՛հ քնչ մրմունջ հանես վրտակ
Ականակիտ և հանդարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ,
Նային զերեանք վարդն ու աղջիկ.
Բայց չես վրտակ իմ հայրենեաց.
Գընա, հոսէ սրտէս 'ի բաց։

—

. . . . . .
. . . . . .

Զ.

87.

Զինուվնիկի կնիկ կուլիմ,
Լաւ զբքսիր իս կունենամ.
Սիրուն մարդուս կռնէն բռնած
Իս պաղրուշկով ման գուքամ։

—

Միր հարևան աղջըկիրքը
Ջգրու ճիճինի գուքան.
Սեճարքումը, կամպանիումը
Իս բացըր տիղ կունենամ։

—

88.

Զիս ասում, թէ՝ լաց իս էլի.
Բարով տեսայ, իմ սիրեկան.
Վարթի նըման բաց իս էլի
Խարերով,
Խարերով.

Բարով տեսայ իմ սիրեկան։

—

Աբի մէ դարդըս իմացի,
Եշխեմէդ համան իմ լացի.
Օրըս էսպէս անց է կացի

Դարերով,
Դարերով.
Բարով տեսայ, իմ սիրեկան:

—

Եվ կու հաքնիս ալ ու ատլաս,
Տեսնողին կու շինիս մաս մաս.
Դուշիդ պիտի լալ ու ալմաս
Շարերով,
Շարերով.
Բարով տեսայ, իմ սիրեկան:

—

Ես քիզ գովիմ խաղի մէջըն,
Շամամիերըդ թաղի մէջըն.
Սան իս գալի բաղի մէջըն
Եարերով,
Եարերով.
Բարով տեսայ, իմ սիրեկան:

—

Այեաթ- Նովէն վո՞ւնց դընջանայ՝
Աչկերըդ օսկէ փընջանա.
Դուշմանի լիզուն մընջանայ
Զարերով,
Զարերով.
Բարով տեսայ, իմ սիրեկան:

Պ.

89.

Պարկեշտասուն կոյս գեղեցիկ նազելի,
Պերճ շառաւիղ Մամիկոնեան քաջ տոհմի.
Հայաստանեայց քնքոյշ ծաղիկ Շուշանիկ,
Շնորհաւորեմք քո հարսնութիւնդ պանծալի:

—

Դուստր մեծի սպարապետի Վարդանայ
Մեծ Իշխանին Վրաստանի հարսնանայ.
Հայաստանեայց քնքոյշ ծաղիկ Շուշանիկ
Իշխանական գահի վերայ բարձրանայ:

—

Բայց ուր երթաս, ուր որ լինիս Տիրուհի,
Մեր սիրտը միշտ քեզ ուղեկից կըլինի.
Հայաստանեայց քնքոյշ ծաղիկ Շուշանիկ,
Գնաս բարեաւ, Սուրբ խաչը քեզ հովանի:

Զ.

90.

Ջան գիւլում:

Ծառիս տակը մանիշակ, Ջան գիւլում Ջան Ջան,
Իմ եարը քանց քեզ շիշակ, Ջան ծաղիկ Ջան Ջան.
Ութ թումանիցն անց կենամ, Ջան գիւլում Ջան Ջան,
Քեզ կանեմ եարիս մշակ, Ջան ծաղիկ Ջան Ջան:

—

Տեղ եմ քցել զալամքեար,
Մէջն եմ գրել գեալանթար.
Ես մի բուռը լեղակ եմ,
Բեգիրգանի տեղակ եմ:

Ջաղացս մանի մանի,
Գունս անուշ կըտանի.
Իմ եարը սարում, քօլում,
Իմ քունը ռնց կըտանի:

—

Սիրել եմ սերն երեսին,
Ըէյհան թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Աստուծոյ կրակն երեսին:

Ջաղացիս գուռը տաշած,
Աղլբխիս գիլը քաշած.
Կեռ կեռ ունքերիդ մեռնեմ,
Ոսկէ զալամով քաշած:

—

Հանքէն գաս՝ գեղը մտնես,
Իմ քցած տեղը մտնես.
Ինձնից գիւման եար բռնես,
Բեմուրվաթ հողը մտնես։

—

Մոլիկ արէք էն ղըշլին,
Ոտը դրել ա փըշլին.
Գըլուխս ղուրբան կ'տամ
Զալ աչք ու կարմիր թշլին։

—

Ոչխարս արել եմ դուզը,
Ջօկել եմ ղարագեօզը.
Աղլուխդ ղարկի՝ նաշխեմ,
Թափ տուր քաքուլիդ թոզը։

—

Անձրև եկաւ շաղալէն,
Ուռու տերև դողալէն.
Հրէս եկաւ իմ աղբերն,
Ալ ձին տակին խաղալէն։

—

Քարիս տակը քարոտ ա,
Պարնի ձիանն արօտ ա.
Թամամ օխտը տարի ա,
Քիրն աղբօրը կարօտ ա։

—

Գեռը նի մտայ, խոր ա,
Քաթան շաբիկս նոր ա.
Իմ նանին խաբար արէք,
Ես օլքեայ օլքեայ կորայ։

—

Մեր կարով քօչ ա երթում,
Քօչ քօչի մէջ ա երթում.
Էրնէկ էն քուէր աչքի լսին,
Օխան աղբօր մէջ ա երթում։

—

Գնացի ջուրը ջըրի,
Ոտս ընկաւ օձի լեղի.
Իմ հօրն ու մօրն ինչ ասեմ,
Ինձ տուին ղարիպ տըղի։

—

Տուն եմ շինել զանանայ,
Ղարղու կ'տամ դիմանայ.
Կուռդ մեկնի՛ ջուրն ինձ տուր,
Խմեմ, սիրտս հովանայ։

—

Դու նստել ես դոշակին,
Ուշք ու միտքդ փեշակին.
Խմել ես նռան գինին,
Հոտ քաշել մանիշակին։

—

Ես մի կանաչ խիար եմ,
Քո ջանին իխթիար եմ.
Երթաս երթաս, յետ կաննես,
Իմանաս, բեղլու եար եմ։

—

Սարիցը ջուր ա երթում,
Հարցրէք ո՞ւր ա երթում.
Քենին մահանայ արել,
Եարոջը տես ա երթում։

—

Ծաղիկ ունեմ ալայ ա,
Ալայ չի, ալվալայ ա.
Եար բռնիլը լաւ կլնի,
Բաց թողալն բալա ա։

—

Կանաչ տեփուր մէյդան ա,
Տեսէք իմ եարը տանն ա.
Նոր ծլած բեղիդ մեռնեմ,
Ոսկեթելի նման ա։

—

Մի ջաղաց երկու դռնի,
Բարձ դրէք, եարս կռնի.
Ես դու մի բաղում պ՛տինք,
Ես չինարի, դու նռնի։

—

Սարէն կ՛գայ ճիաւոր,
Մեր տունը չարդախաւոր.
Հրես եկաւ իմ աղբեր,
Երեք օրուան թագաւոր։

—

Արևը կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Ցիսուն օր պաս եմ պահել
Իմ աղբօր ճամբի համար։

—

Մատանիք ոսկէջրած,
Այ աղայ, դու ինձ գրաւած.
Դու խանին նոքար պըտես,
Ես քո ծոցը զանջիլուած։

—

Կանգնել ես, կանչում էլ չես,
Բոյիցդ ամանչում էլ չես.
Եկայ կշտովդ անց կացայ,
Տէր ես, ճանաչում էլ չես։

—

Սարի թրթնջուկ թագա,
Ջավզ ու մեխակ քեզ մագա.
Ինձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տղին ո՞նց սազ ա։

—

Բերդիս կտերն ցել ունիմ,
Ալ աբրշում թել ունիմ.
Թիլիկ միլիկ սարկաւագ,
Ես քեզանից մէյլ ունիմ։

—

Հաց եմ թխել գարի ա,
Իմ եարը սաֆարի ա.
Սաֆար երթալուդ մեռնեմ,
Խօսքերդ շաքարի ա։

—

Սարի խոտը ծեղվէ ծեղ,
Աղբեր երթանք միասեղ.
Որ հարամին վրայ տայ,
Գլուխս տամ գլխիդ տեղ։

—

Մի խնձոր ունիմ կըծած ա,
Կըծած չի արծաթած ա.
Աղբերս ուզեց տուի ո՛չ,
Ասի եարիս զրկած ա։

—

Կանդնել ես ախա բախա,
Լաչակիդ տուտը կախ ա.
Սև տղայ, սպիտակ աղջիկ,
Բռնել էք իրար եախա։

—

Երդիկ երդիկ բռնել ես,
Երդկակոճին կռնել ես.
Նանս քեզ աղջիկ չի տալ,
Անուշ քունդ կոտրել ես։

—

Արևն ընկաւ մեր պատին,
Արքայութիւն իմ տատին.
Հոգիդ դատուի, այ տատի,
Ինձ խի՞ տուիր կռնատին։

—

Ջրի վրայ սազ պըտի,
Իմ օրդակը ղազ պըտի.
Ի՞նչ եմ անում թուլունգին,
Իմ եարը շահբազ պըտի։

—

Ա՛յ եար, այ եար կռնել ես,
Մարայ աղլուխ բռնել ես.
Բարև տուի, առար ո՛չ,
Մագեար թարկս տուել ե՞ս։

—

Բաղումը կար բաղմանչի,
Շուին ածէր ու կանչէր.
Թաբուն դառած՝ դուրս թռան,
Մինն իմ եարի նման չէր։

—

Մեր դրանը ուռի ծառ,
Ոսկէ կաքաւ վռէն թառ.
Երթար ու գար, օրօր տար,
Ալվան ծաղիկ տանել տար։

—

Հայ օրօն օրօն ծաղիկ,
Կարմիր ու տորոն ծաղիկ.
Ալվալայ խալխ եմ կիտել,
Էն էլ քեզ օրօն ծաղիկ։

—

Նախարատափին խնկի ծառ,
Խնձոր քցեմ, արի՛, տար.
Ուրբաթ, շաբաթ քեզ մուլատի,
Լուս կիրակի արի՛, տար։

—

Իմ աղբերը սարումն ա,
Շուին գոտկածալումն ա.
Աղբեր ջան շուիդ ածա՛,
Քիրդ Լուսայ քարումն ա։

—

Մի բարձ եմ արել՝ իմն ա,
Մին էլ եմ արել՝ իմն ա.
Գնանջու քարվանն գալիս ա,
Միջի թավադն էլ իմն ա։

—

Տեղ եմ քցել փոթ կ'տայ,
Բարձ եմ դրել սոթ կ'տայ.
Մեռնեմ միջի քնողին,
Անուշ խնկահոտ կ'գայ։

—

Ա՛յ տղայ, դու հուր ես, մուր ես,
Ես ծարաւ եմ, դու ջուր ես.
Մուղարլամ թառլամ շոր ես,
Համբարձում գիշերն ոռ ես։

—

Արևն արեգունի,
Իմ եարս գեղարքունի.
Գեղարքունուց սարը փուլ գայ,
Բալքի իմ եարը տուն գայ։

—

Ամպել ա ամպի տակին,
Ծունկս ծնկանդ տակին.
Ես քեզ որ տեղ սիրեցի,
Մեխակի ծառի տակին։

—

Մեր դրան առաջին մի դարան,
Տղեքն եկան, նի դառան.
Կուռս տարայ՝ որ բռնեմ,
Թազի ու թուլայ դառան։

—

Մեր դրան առաջին մի դարան,
Աղջկերքն եկան, նի դառան.
Կուռս տարայ, որ բռնեմ,
Շարած մարգարիտ դառան։

—

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Ալս ծալուծալ կուզեմ.
Որ տունը որ ես մանեմ,
Ոսկին սարէ սար կուզեմ։

—

Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,
Աչքերդ չալ չալ աղջիկ.
Դու մեր տանը հարս պռես,
Իմ քիրը քեզ տալ աղջիկ։

—

Աղբէր հանաքիդ մեռնեմ,
Ոսկէ դանակիդ մեռնեմ.
Ճամբայ երթող շէկ աղբէր,
Դուքան բազարիդ մեռնեմ։

—

Զաղացս ման եմ տուել,
Սիրել եմ, ջան եմ տուել.
Օխտը տարի սէրութիւն,
Մէկ օր պայման եմ տուել։

—

Զաղացիս աջու կուռը,
Կզընկայ միջի գիւլը.
Վա՛յ իմ սիրած բիւլբիւլը
Քաշեցին խանի դուռը։

—

Արազը հեշտացել ա,
Ճամբեքը կոշտացել ա.
Իմ նանին խաբար տարէք,
Մուշտարիս շատացել ա։

—

Անդ կ'ծեծեմ, խաղ կանեմ,
Մաշիկ ոտիս լախ կանեմ.
Ա՛յ տղայ, դու շատ մի՛ խօսալ,
Մուկն ըռխիցդ կախ կանեմ։

—

Ա՛յ օրօն, օրօն ծաղիկ,
Կարմիր ու տորոն ծաղիկ.
Տարեն ը մի հետ կգաս,
Գամ քեզ օրօն այ ծաղիկ։

—

Ա՛յ տղայ, դու հերիս մերիս,
Ո՞ւր եկար կէս գիշերիս.
Տեղումն քեզ տեղ չկայ,
Գլուխդ դիր կռներիս։

—

Ա՛յ տղայ դու բաղոջն արի՛,
Ոտներդ շաղոջն արի՛.
Էս թաղը ղալմաղալ ա,
Ման տո՛ւր, էն թաղոջն արի՛։

—

Ճըրագ դնեմ լիսացու,
Կարմիր խառէն քիսացու.
Ես քո մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու։

—

Ծաղիկ եմ քաղել, դեղին ա,
Իմ եարը ձեր գեղին ա.
Հիլ ու մեխակ շատ ունիմ,
Հըրէ եարիս ձեռին ա։

—

Ծաղիկ եմ քաղել, ալ ա,
Ալ չի, ալվալայ ա.
Եար բռնելը լաւ կըլի,
Բաց թողալը բալայ ա։

—

Ծաղիկ եմ քաղել նարինջի,
Ա՛յ տղայ, վեր արի՛, փինջի.
Իմ մէրը քեզ աղջիկ չի տալ,
Քանի՞ ման գաս եաւընջի։

—

Ա՛յ տղայ, դու բաղի միջին,
Ոտներդ շաղի միջին.
Կանչի՛, կանչելուդ մեռնեմ,
Ես եմ քո հաղի միջին։

—

Անց կենամ գետի կուռը,
Քաղեմ մի դաստայ նուռը.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Կ'քաշեմ խանի դուռը։

—

Ա՛յ տղայ, դու սև չուխաւոր,
Սաղմոսը ծոցիդ սովոր.
Էրնակ կ'տամ էն օրը,
Տունս կ'գաս թագաւոր։

—

Ա՛յ տղայ, իր անել տո՛ւր,
Մի մատը գիր անել տուր.
Ինձանից քեզ ճար չ'կայ,
Քաքուլդ վեր անել տուր։

—

Զաղացի դուռը տարթ ա,
Կտուրը լիքը մարդ ա.
Հորէս եկաւ իմ եարը,
Գռաիկը լիքը վարդ ա։

—

Առուիդ արասին ղուրբան,
Գինուդ կարասին ղուրբան.
Ճամբիցը գալող ալբէր,
Սրտիդ հաւասին ղուրբան։

—

Վարդ եմ քաղել մաղերով,
Վէր եմ դրել շաղերով.
Հորէս եկաւ իմ եարը,
Ալ ձին տակին խաղալով։

—

Ջուր ա գալի լափ տալէն,
Երկու խնձոր ծափ տալէն.
Հորէս եկաւ իմ եարը,
Թուխ գդակը թափ տալէն։

—

Ջուն դնեմ վրէն, խաշեմ,
Նի ըլեմ կտուրը, եաշեմ.
Տեսնեմ, աղբէրս գալիս ա,
Զոքեմ, չաքմէքը քաշեմ։

—

Զաղացի դուռը փոս ա,
Քար կ'քցեմ, կխօսայ.
Կանչի կանչելուդ մեռնեմ,
Իմ նանի աղկիզ փնայ։

—

Ծաղիկ ծաղկեւանայ ես,
Ալբդ Երևանայ ես.
Տարէնը մի հետ կգաս,
Մաղեամ նուբարխանայ ես։

—

Ձեր բաղի դուռն բաց ա,
Ոտներդ շաղով թաց ա.
Եարիցդ հեռացել ես,
Աչքերդդ լիքը լաց ա։

—

Աղջիկ, մաղերդ հուսէիր,
Թուշդ երեսիս քսէիր.
Ելէիր բարձիս վրայ,
Բիւլբիւլի պէս խօսէիր։

—

Աղջիկ, դնա՛նք մեր բաղը,
Պոկենք շամամիդ թաղը.
Էդ երեսիդ շաֆաղը
Հանել ա սրտիս դաղը։

—

Այ տղայ, անունդ ա Սարգիս,
Արի, նստենք էս կարգիս.
Ես ու դու բաղում պիտինք,
Ես չինարի, դու նարգիզ։

—

Տիկ արէք էն դուշին,

Ոտը դրել ա փուշին.
Մեռնեմ չալ չալ ունքերին,
Թուխ աչք, կարմիր թուշին։

—

Սպիտակ ձին նալն ինչ կանէ,
Սիրունը խալն ինչ կանէ.
Եարն որ եարին սիրէ,
Ասուլման ինչ կանէ։

—

Ջուն գնեմ թավէն խաշեմ,
Գնամ կտրովը եաշեմ.
Եթէ եարս գալիս ա,
Ջոքեմ, չէքմէքը քաշեմ։

—

Ա՛յ աղայ, դու ալ կապաւոր,
Տուն ունես չարդախաւոր.
Էն օրին էրնէկ կուտամ,
Իմ տուն տուն գաս թաղաւոր։

—

Սև հաւի ձուն փուռն ա,
Իմ եարը գնանջու կուռն ա.
Գնանջայ, քու սարը փուլ գայ,
Բալքի իմ եարը տուն գայ։

—

Վերնաքամին գալիս ա,
Թիկնամէջս տալիս ա.
Մէյդան արէք, անոյ կենայ,
Պարօտ եարս գալիս ա։

—

Ջուր ա գնում արխումը,
Աբրըշում ա չարխումը.
Էն օրին էրնէկ կուտամ,
Ջոմարդ կանգնես խաչխումը։

—

Մէկ խնձոր ունեմ կծած ա,
Բոլորքը զառով նշխած ա.
Աղբերս ուզեց՝ տուի ոչ,
Ասի եարիս զրկած ա։

—

Գնացի Ջուրը տեսայ,
Շաբաքա դուռը տեսայ.
Ծլած բեղերուդ մեռնեմ,
Իմ մօրս ազիզ փեսայ։

—

Գնացի Ջուրը լուացք,
Սապոնս էր ոսկեջրած.
Իմ հէրն ու մէրն ինչ անեն,
Ճակատիս էս էր գրած։

—

Իմ աղբէր ծաւի տակին,
Սաղմոսը կռան տակին.
Սաղմոսն գիր էր դառել,
Լեզուն բիւլբիւլ էր դառել։

—

Մեր տան յետնէն մի մառան,
Տղէրքն եկան, յետ դառան.
Ձեռս տարայ, թէ բռնեմ,
Դիվ լալ ու մարջան դառան։

Սարերի սինձն ի՞նչ ա,
Կաթն ու բրինձն ի՞նչ ա.
Եարը որ եարին սիրէ,
Խօսքն ու զրիցն ի՞նչ ա։

—

Դար 'ի վեր ջուր ա գնում,
Հարցրէք, թէ ո՞ւր ա գնում.
Գենուն մահանայ արել,
Իր եարի տուն ա գնում։

—

Ման գիւլում կասեմ, կ'շարեմ,
Տոպրակը կածեմ, կկարեմ.
Կորէ կտուր ման կ'գամ,
Քանց քեզ լաւը կձարեմ։

—

Մեր տան յետնէն բաղչա կայ,
Բաղչի միջին ռեհան կայ.
Ռեհանին քաղող պիտի,
Ծոցումը խաղող պիտի։

—

Ա՛յ տղայ, դուն ասա՛, մ'ասա՛,
Գդակիդ թափէն խաս ա.
Իմ մէրը քեզ չի տալի,
Իմ հօրը քրթամ ասա։

—

Գիւլում գիւլում գիւլ չիչակ,
Ես ու դուն մանենք մին դոշակ.
Մինչև ի լուսը քչփչանք,
Լուսէն յետոյ կրկչանք։

—

Աղջիկ կապէտ ալ պիտի,
Բողչէդ ծալ ծալ պիտի.
Ում տունն էլ որ տուն երթա
Ոսկին սարէ սար պիտի։

—

Մեր տան տակին վար կանեմ,
Զալ ագռաւին քար կանեմ.
Թէ իմ սիրածն ինձ տան,
Գ.ժուխիւնս թարկ կանեմ։

—

Մեր բաղումը մի դարան,
Շատ հարսնաղջիկ նի դառան.
Զեռս տարայ, թէ բռնեմ,
Դիմի թագի, թուլա դառան։

—

Մեր բաղումը բաղմանչի,
Սալբի ծառի նման չի.
Շատ հարսն աղջիկ դուրս եկան,
Ոչ մէկն եարիս նման չի։

—

Դու նստել՝ ես գերանին,
Դարդ ու շուին բերանին.
Ոսկէ ղայթան 'տի գործեմ,
Դնեմ ջիբիդ բերանին։

—

Ա՛յ տղայ, դուն օտար լինիս,
Սև հաւի կատար լինիս.
Ինձ մէկ խուսմար եար սիրի,
Դուն ճոթ ու պատառ լինիս։

—

Այ օրն օրն ծաղիկ,
Կարմիր ու տորոն ծաղիկ.
Հարսն ու աղջիկ մեծրելեմ,
Որ գան ու քաղեն ծաղիկ։

—

Ջուրը գալիս ա լափ տալով,
Երկու խնձոր ծափ տալով.
Հորէն եարս գալիս ա,
Ալ գդակը թափ տալով։

—

Գիւլում կասեմ, կշարեմ,
Ջուալը կածեմ, կ'լարեմ.
Թամամ աշխարհ ման կգամ,
Գեղնից լաւը կճարեմ։

—

Ես աղջիկ եմ, ալ կուզեմ,
Բողչաս ծալէ ծալ կուզեմ.
Երբ որ եարիս տուն կերթամ,
Գոռիկս թիրմա շալ կուզեմ։

—

Այ տղայ, դու հնր իս, մե՞ր իս,
Ո՞ւր եկար կէս գիշերիս.
Ծոցումն քեզ տեղ չըկայ,
Գլուխդ դիր կռներիս։

—

Այ տղայ՝ դուն բաղոմն արի,
Ոտներովդ շաղոմն արի,
Էս թաղը ղալմաղալ ա,
Ման տուր, էն թաղոմն արի։

—

Գեղից գաս, գեղը մտնես,
Իմ քցած տեղը մտնես.
Ինձանից ջոկ եար բռնես,
Բեմուրաղ հողը մտնես։

—

Վարդ եմ քաղել մաղերով,
Վէր եմ դրել շաղերով.
Հրէս, եկաւ իմ եարն,
Ալ ձին տակին խաղալով։

—

Գնացի ջուրը տեսայ,
Նուշապանդ դուռը տեսայ.
Իմ հանի ազիզ փեսայ,
Գուլգազ երեսդ տեսայ։

—

Ալ ձին նալն ի՞նչ անի,
Սիրունը խալն ի՞նչ անի.
Սիրածը սրտով ըլնի,
Աշխարհի մալն ի՞նչ անի։

—

Այ տղայ, դու հատիկ մատիկ,
Երեսդ նռան հատիկ.
Ինչ վախտ ես քեզ կուտեսնեմ
Համ համբարձումա, համ Զատիկ։

—

Մեծ արտումն փուշ կըլի,
Սառն աղբիւրին թուշ կըլի.
Ուր գնում ես, թէղ արի,
Եարդ քեզ կարօտ կըլի։

—

Զաղացքի դուռը տաշած,
Եաղլուխիս կիւլը քաշած.
Մեռնեմ կէռ կէռ ունքերիդ,
Հէնց ա ղալամով քաշած:

—

Գնացի դեռը լուացք,
Սապոնս ոսկեջրած.
Հէրս ու մէրս ինչ անեն,
Ճակատիս էս ա գրած:

—

Աղջիկ, աղջիկ, ալ աղջիկ,
Երեսդ կայ խալ, աղջիկ.
Էրնէկ էն օրին կըլի,
Իմ քիրը քեզ տալ, աղջիկ:

—

Ծառիս տակը մանիշակ,
Իմ եարը քանց քեզ չիշակ.
Օխտը թռումնից անց կենամ,
Քեզ բռնեմ եարիս մշակ:

—

Մի Ջաղացք երկու դռնի,
Բարձ բերէք, եարիս կռնի.
Ես, դու, մի բաղում պտենք,
Ես չինարի, դու նռնի;

—

Ա՛ տղայ, դու պոզ ճիաւոր,
Սաղմոսը ծոցիդ սվոր.
Էրնէկ կուտամ էն օրը,
Գաս մեր տունը թագաւոր:

—

91.

Ջան Ջան կիրագի,
Վայ երկուշաբթի.
Դէպի Ջան փուրըս ցաւում է,
Ջիմ գնայ աշկիրտ:

Ս.

92.

Սար ու ձոր ընկած, մէկ չոր թփի տակին,
Գետնին նայելով, մնացել եմ նստած.

Զեռս ծոցումս, գլուխս մէկ լեռ քարի
Տուած՝ լալիս եմ օրըս խաւարած։

—

Ամպերն առաջիս, սարերն եղեւիս,
Քեզ մոլիկ տալով, այ իմ քաղցր Մասիս,
Աղի արտասուքով հրուած, խորոված,
Երեսիդ նայիմ, մընամ քարացած։

—

Ծնողք, ազգականք հեռու ինձանից,
Լուսնին նայելով, ձեր սէրն յիշելով,
Եարաբ ե՞րբ կըլի, որ ես ձեզանից
Իմ կարօտս առնեմ՝ ձեզ ջան ասելով։

—

Աչքս ծով դարձաւ՝ ձամբին նայելով.
Մէկ ղուշ որ գլխիս պըտիտ է գալիս,
Թէ ե՞րբ մէկ խաբար կ՚հասնի ինձ բարով,
Հոգոց հանելով ասում եմ, լալիս։

—

„ Նազլու իմ, նազլու, աննման նազլու,
„ Սիրտս խորովի՝ անուշդ յիշելով,
„ Նազլու իմ, նազլու, հրաշալի նազլու,
„ Աղասին քեզ տայ իր եդին բարով։

—

„ Սարերի դոշին, ձորերի միջին
„ Վայ գլխին տալով քո խնդճ Աղասին,
„ Երեսիցդ զրկուած, քու սիրոնէն մաշուած,
„ Տարակի նման փշի վրայ նստած։

—

„ Նազլու իմ, Նազլու, մէկ շունչս է մնացել,
„ Ոսկերքս քրքրուել, աչքերս խաւարել,
„ Թող մէկ շունչդ առնիմ, յեսոյ հոգ մտնիմ.
„ Դժոխքն էլ տանին, ես հանդիստ կըլիմ։

—

„ Քեզ եմ մընում, քեզ, քու ջանին մեռնիմ.
„ Հոգ ու գերեզման ես վըրես ունիմ.
„ Քանց իմ սառը մարմինն էլ ինչ գերեզման
„ Ինձ պէտք կըգայ, երեսիդ զուրբան։„

93.

Սամավարը պատուական է,
Մէջին ջուրը բաւական է։
Զայ խորթողին աչքը սիրեմ.
Ձեռքէն բռնեմ, քովս բերեմ։

—

Զայ ասած բանդ խիստ աղէկ բան է,
Մարդուս սիրտը ռահաթ կանէ։
Զայ խորթողին և այլն։

—

Հանէ ռոմին շիշան հանէ,
Դեղին չայը կարմիր կանէ։
Զայ խորթողին և այլն։

—

Արծթի պատանոս, թաս ու գաւաթ,
Ռոմի շիշան մէջը դրած։
Զայ խորթողին և այլն։

94.

Սիրեկան քեզ համար
Կեանքս կէս էլաւ,
Քո սրտի շահելը
Ոչնչով չէլաւ։

—

Ի՞նչ գէթ եմ արել քեզ
Աւա՛ իմ հոգիս,
Ոտներդ կը ընկնեմ,
Մեղայ կըգամ քեզ։

—

Ի՞նչ կըլնի մէկ ձայն տաս,
Ո՛վ դու անօրէն,
Սիրտս մխիթարես,
Թափես մահեմէն։

—

Ի՞նչ ես ասում իժում
Քո խղճմտանքիդ,
Թէ որ մատաղ անեմ
Գլուխս պատկերքիդ։

—

Էտէնց էլ քարեսիրտ
Չես պիտի լինի.
Անմեղ տեղը մարդու
Հալի ու մաշի։

—

Քո անուշ բերնեմէն
Մէկ համով խօսքը
Զարշարանքիս դեղն է,
Իմ բաղդի հիմքը։

—

Աստուած սիրունութիւնն
Քեզ էնդուր էրիտ,
Որ լինիս ողորմած
Դու սիրահարիդ։

—

Խնդրում եմ աչքիս լոյս
Մէկ տեսութիւն դաս,
Էս խեղճ ջրատարիս
Մէկ համբուրել տաս։

Վ

95.

Վերջին վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին զարդ.
Նա քեզ հանեց իւր կրծից, } կրկնէ.
Ինձ պարգևեց վերջին վարդ։

—

Մանկութեան ոսկէ ժամերն
Անցել են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ } կրկնէ։
Դու ես միայն, վերջին վարդ։

—

Գարնան օրերն անցել են,
Տօթ ամառն է ինձ էրում.
Միշտ ապատում են քու տեսքին, } կրկնէ։
Դուն ամառուայ, վերջին վարդ։

—

Երջանիկ կեանքիս օրերը
Ցաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք } կրկնէ։
Միտքս բերիր, վերջին վարդ։

—

Շատ չի տևիլ՝ կբացուի
Առաջիս սև գերեզման,
Էս աշխարհիս միայն քեզ } կրկնէ։
Հետս կառնում, վերջին վարդ։

Տ

97.

Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛,
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։
Արի՛ Աստուած Հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց,
Հա՛ս օգնութիւն Ծառայից քոց,
Լո՛ր օգնական ազգիս Հայոց։
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

—

Միջնորդութեամբ սրբոյ խաչիդ
Եւ անարատ սուրբ Ծնողիդ
Ցիշեա՛ զՀեղու

արևան Փրկչիդ,

Եվ 'ի խնդիր փոքու հոտիդ։
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

—

Զի գիտացաք մեք հաւատեաւ,
Որչափ մեղաց մերոց լցաւ,
Ուստի Տէրդ մեր բարկացաւ,
Առ 'ի խրատել զմեզ զարթեաւ։
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

—

Արդ անկանիմք առաջի քոյ,
Գոչեմք մեղայ Տեառնդ մերոյ,
Դարձ՛ 'ի մէնջ զցասումն քոյ,
Վասն անսպառ գթութեան քոյ։
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

—

'Ի քէն հայցեմք մեզ օգնութիւն,
Ամենասուրբ երրորդութիւն,
Տո՛ւր աշխարհիս խաղաղութիւն,
Գրիգորէից աղաւթիւն։
Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛, Տէր ողորմեա՛։

98.

Տէր կեցո՛ դու զՀայս
Եւ արա՛ զնոսա պայծառս.
Կեցո՛ զՀայս։

Զողորմութիւնդ վերին
Հաճեաց ճօնել նոցին,
Զի նովիմբ մարթասցին
Ապրել յաստիս։

'Ի քո լիջեալ տեղի
Զաթոռ Հայրապետի
Մեր Հաստատեա՛։

Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածազգեաց
Շնորհեա՛ պետին մեր Հարց,
Որ զմեզ հովուէ։

—

. . . —
— . . .
. . . —
—

Փ

99.

Փութ՝ առ մեզ, նախշուն կապաւ,
Սարերն ամեն կանանչացաւ,
Զարդ զգեցեալ պայծառացաւ.
Ցայդ լեռներէն 'ի վայր փութաս,
Ցաւուրս գարնան պարեալ ցնծաս,
Նախշուն ձագերով շուրջ կու գաս,
Արագ արագ աստուսելով,
Ծաղկանց վերայ թաւալելով.
Վասն ոյր թռչիս,
Ընդէ՞ր փախչիս
Կամ զի՞ թագչիս,
Կողկողալով՝ ձայն արձակես
Շաղկղա՛—շաղկղա՛,
Կաղկղա՛—կաղկղա՛,
Միշտ հառաչես ու կարկաչես։

—

Ոսկիափայլ փետուր քոյին
Զանազան գունով շողշողին
Որպէս զլոյս բոլորովին.
Ցայդ և այլն։

—

Փառօք ճեմես որպէս իշխան,
Ներինքն քեզ յարկ սեփհական.
Դաշտերն ամեն համանգամայն.
Ցայդ և այլն։

—

Ծիծաղաձայն քաղցրիկ թռչուն.
Զքնաղատիպ և յոյժ սիրուն.
'Ի մէջ ծաղկանց ննջես 'ի քուն.
Ցայդ և այլն։

—

Քև ձոխանան ամեն լերինք
Եւ համօրէն մարգագետինք,
Զքեզ գովեն ազգ և ազինք.
Յայդ և այն։
Այդ բարձրացո՛ զձայն քո ընդ իս.
Եւ փարատեա՛ զսուգ սրտիս
Հայցմամբ քոյոյ երգաբանիս։
Յայդ և այն։
Կարկաչաձայն այդ ձայն քո սուրբ
Տոչորէ զիս սիրոյ քո հուրբ,
Զեռ զովանալ արտասուաց ջուրբ։
Յայդ և այն։
Այդ լեռներուն հուպ առընթեր
Դէպ զառ 'ի վայր և զառ 'ի վեր
Թերաբաց թեւօք ճեմ առեր։
Յայդ և այն։

100.

Փչուի էսպէս ժամանակն, յոյս ու հաւատ, սէր չըկայ.
Մաշվիլ է ճշմարտութիւնն, մէ իմանող տէր չըկայ.
Բռնիլ ինք միր միղաց ջիղէքն, մէկ մէկու բամբասելով.
Պատրվեցաւ խոտակութինն, հաւատով հէրն ու մէր չըկայ։

—

Հասաւ միր միղաց պատիժն, իմացէք ի՞նչպէս բան է.
Էլ մարթուն հաւատալ չըկայ, էս ի՞նչպէս դադաստան է.
Տանջանք ունինք դժուխկումը, օվ լիզվով սթամ կօնէ.
Ահալի վարպիան պատիւ չունէ, մէկ ժամանակ տէր չկայ։

—

Խափանուից բարևելու միակն, սէրով սալամ տալ չունինք.
Պէտք է մէկմէկու բամբասինք, աւելի ափալ չունինք.
Ճշմարիտ յուսով մարթ սիրինք, միասին ման գալ չունինք.
Քիչ է միր միղաց հարցմունքը, էլ քուր ու ախպէր չկայ։

—

Վիրավուրվեցանք հաւատից, օրէնքն խաւարում է.
Շատ մարթ կայ հոքուն չէ հոքում, մարմինը զարթարում է.
Քիչիկ—Նովա միկդ լա՛ց, ինչ անձդ բաշարում է.
Աւելցաւ շառն աշխարքիս, արդարութան խէր չըկայ։

Гос. Библиотека

24711